



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐԳՈՎ ԴԱՎՅԱՆ

2

ԱՐՄԵԴԻՆ ԿԻՆԸ

A 38121



ԳԵՂԱԳԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏԵՇԻՔՆԵՐ

1933

Պատ. յեմ. Ա. Բակունց
Տելե. Խմբագիր Տ. Խաչվանեան
Լեռվական խմբագիր Ա. Տ Հովհաննեան

Սրբագրիչներ՝ Ա. Գառաքյան յեկ Ա. Լուսյան
Հանձնված և արտադրության 9 Հունիսի 1933 թ.
Սուրբագրված և տպագրելու 20 Անդոնիք. 1933 թ.
Դատիք 1437, Գլավիիռ 8197 (թ). Տիրաժ 3000
Գ ե տ ե ր ա տ ի տ ա պ ա ր ա ն, Յ ե ր ե վ ա ն

ԱՌԱՋԻՆ ԿԻՆԸ

Նվիրում եմ «ՇՄԻՒՏԻ»
հարվածայիններին

1.

Բակի կենտրոնում, յերկու քարից պատրաստած ո-
ջախից միարար ծուխ եր բարձրանում:

Սըեի խանձող ճառագայթները միանալով ոջախի
հրակի հետ, պառավ իրինայի ճակատից ծծում եյին
ըրոնքի զեղնած կաթիլները:

Մեծ, բրդոտ կատուն ավելի հով տեղ չգտնելով,
մտել եր իրինայի վոտների արանքն ու մոռում եր: Պա-
ռավն առանց խանդարելու մոռացող կատվի հանդիսատը,
անընդհատ փչում եր ոջախի տակն ու խառնում այրվող
արևածաղիկը:

Իրինայի կոպերը սև ծխից կարմրել եյին, աչքերն
արցունքոտվել: Արցունքի կաթիլները միանալով նրա
ճակատից ծորացող քրաինքին, յերեսի կուչ յեկած կաշու
գրայից հանդարտությամբ ներքեւ եյին գլորվում:

Այդ ժամանակ գանդապ քայլելով, ժպիտը դեմքին,
նրան մոտեցավ Ճույան—պառավի աղջիկը:

Պառավը լսելով նրա քայլվածքի ձայնը, թողեց
խառնելն ու յետ նայեց:

— Ճուիկ ջան, յեկա՞ր, —ուրախացած ու վոտքի
կանգնելով, բացականչեց պառավը:

— Ոյ, մամա, աչքերիդ կոպերն ինչ փիս կարմրել
են, —վոխանակ նրա հարցին պատասխանելու, ուղիղ մոր
աչքերին նայելով, ասաց Ճույան:

Պառավն իսկույն փեշը բարձրացրեց և տարավ դե-
պի աչքերը:

— Ես անտեր ծխիցն ա ելլ...

— Վոշինչ, —քիչ մտածելուց հետո, ասաց Տուշան, — դրանից ել կազմատվես:

Տուշան առավոտյան մորն ասել եր, վոր գործի յեւնդունվել: Մայրն իմանալով, վոր աղջիկը ծանր ֆիզիկական աշխատանք պիտի կատարի, դժբոհել եր:

— Ախ, Տուշա, մի հարմար գործ չգտա՞ր: Հիմա եղտեղ դու վո՞նց պետք եւ աշխատես:

— Մամա, դու ինչո՞ւ յես անպայման ուզում, վոր յես կամ լվացարարուհի գառնում, կամ դործակատար, կամ ել մի այլ բան: Սա ինչո՞վ եւ պակաս վոր, այսուղ ավելի յեն վարձատրում:

— Բանը վարձի մեջ չի, անգինս: Գործն ա ծանր ինչպի՞ս ես դու կատարելու արդ գործը:

— Դու եղ մասին մի մտածի: Յես լավ դիտեմ, թե ինչ եմ անում:

Տուշան զզվել եր կանացի թեթև աշխատանքներից: Ինքը բավականաչափ առողջ և ուժեղ կին լինելով, ծանր աշխատանքից չեր վախենում: Միթե՞ իրենից պակաս ուժի տեր տղամարդիկ այստեղ չեյին աշխատում: Մինչեւ յերր պետք եւ տղամարդու և կնոջ աշխատանքները չինական պարիսպներով իրարից անջատված մնան: Յեթև հնարավոր ե, ինչո՞ւ ծանր աշխատանք չկատարել:

Այդ ժամանակ ծաղկամանը գրկած, Լենիչկան տնից դուրս դալով, մոտեցավ մորը.

— Մամ—մա ջան, տես, ծաղիկ եմ բերել:

— Լավ ես արել, ջանիկս, —նըան գրեկելով, ասաց Տասյան: — Դիր պատուհանում թող մեծանա:

Տատիկը Լենիչկային պատմեց, վոր մայրը գործի յեւտել:

— Հա՞ մամա, —ուրախացած հարցը նառ վաթիվեց մորը:

Մաջի վրա բովվող արևածաղիկն սկսեց այրովել: Պառավը հոտի վրա իսկույն յետ նայեց:

— Կաղատվես, մամա, դրանից ել կազմատվես:

— Հա, հա, յե՞րբ ա լինելու, Տուշա, —սրաի խորքից ասաց պառավն ու սկսեց արևածաղիկը տուղրակի մեջնել:

Էհնիշկան կրծքին սեղմած ծաղկամանը տուն տարափ:

Տոսյան վոտքի կանգնեց, խոկնը հետեւից ել արեածաղկի տուպրակը թեփ տակն առած, հետեւց մայրը:

Կիսաքանդ պատերով բակից արեն արզեն բարձրացել եր: Նրա վերջին շերտն եր միայն կախվել ամենաբարձր պատի գլխից:

Բրդուա կատուն ցատկեց պատի վրա, արեի այդ գեղին վերմակի հետ խաղալու և բարձրանալիս մի բուռը չոյ թափեց ներքեւ:

Պատափը տան շեմքից մանելիս, գլխի հողը թափ տիեց և վիզը յերկարացնելով, դեպի յետ նայեց, ասեց.

— Անպիտան կատու, ուրախությունից դու յե՞ւ ևս թոշեստում, — և նրանք մտան տուն:

2

Ամբողջ գեշեր Տոսյայի քունը չտարափ: Նա անվերջ չըլում եր կողքից-կողք և աշխատանքի մասին մտածում: Նա վախենում եր, վոր աշխատանքը ծանր կլինի և նա չի կարող այն կատարել: Ամառ ժամանակ և, տաք: Բոլորը տղամարդիկ են, ինքը մի կին: Հազար ու մի անհարմարություն:

Նա վերհիշեց նաև գործարանի գիրեկտորի խոսքերը, վորն ոտել եր.

— Մենք իրավունք չունենք ձեզ բնդունելու: Աշխատանքի պաշտպանության կողեքսի համաձայն, կանոն թույլ չի տրվում Փեղիկական ծանր աշխատանք կատարել:

— Բայց յես կարծում եմ, վոր աշխատանքի պաշտպանության կողեքսը ցանկություն ու կամավորությունն ել կարող և ինկատի ունենալ: Յես հարմոր եմ, ինչո՞ւ պետք և ինձ թույլ չտան, քանի վոր յես ինքս եմ ցանկանում:

... Տոսյան շրջվում եր կողքից-կողք ու մտածում:

— Վաչ, Տոսյան, — Անաստասյա Դրազդովան չի ուզում հրաժարվել: Բավական ե, վորքան լվացք և արել:

Այժմ նա գործ ե ուղում, իսկական դործ: Նա աշխատանքից չի վախենում: Նա ամեն ինչի յել կարող ե ընտելանալ: Նա համաձայն ե աշխատելու...

Առավոտը շուտ, բանվորական հագուստով, Տույան գործարանի դիրեկտորի ոգնականի հետ մտամի ձուլարան:

Նա այստեղ արդեն յերեկ յեղել եր, տեսել հսկա դուռնայի կաթսայի մեջ յեռացող չուպունե հալոցքը: Նա տեսել եր նաև այն, թե ինչպես բոցավառվող հալոցքը հոսում եր տակը դրած դույլերի մեջ: Նա ամբողջ գիշերն անքուն պատկերացրել եր հսկա վառարանի ականջ խրանող դպրոցունն ու ջրի նման հոխորտացով չուպունի տաքությունը:

Նա գիտեր, վոր հսկայական ծանրություններ պետք ե տեղափոխի, աշխատելով չափազանց բարձր աստիճանի տաքության մեջ, սակայն նա այդ աշխատանքից չեր հրաժարվում:

Նա վստահ եր, վոր ամեն մի գժվարություն կհաղթահարի և աղատ կերպով կաշխատի:

Աշխատանքն ինձ չի ուտելու, կսովորեմ:

Դիրեկտորի ոգնականը, դույլերով չուպունե հալոցք տեղափոխող բանվորին ցույց տալով, ասաց.

— Բնկեր Դրազզովա, ձեր աշխատանքն ել և այսպես լինելու: Դուք պետք ե կազմապարներ գատարկեք: Հալոցք լցնեք մեջը և սառչելուց հետո՝ դուքս տաք: Ճիշտ ե, ծանր աշխատանք ե, բայց վոր հանձն եք տուի, կնոելանաք:

— Ամեն կերպ կաշխատեմ, — մտազրադ ասաց Տույան և շարունակեց դիտել իր շրջապատը:

Դիրեկտորի ոգնականը մոտենալով հիսնամյա մի թուրք բանվորի, ասաց.

— Մովրում, այս ընկերն ել ե ձեզ հետ աշխատելու: Նոր ե, հասկանո՞ւմ ես, պետք ե հետք լավ վարվեք: Պետք ե այնպես անեք, վոր յերկու որում չթողնի ու փախչի:

Մովառումը ձեռքի ձողը թողեց և սկսեց զարմացած Տույային նայել:

— Այ բնկեր, տիսր սա վո՞նց կարա ըստ աշխատի:
— Վոչինչ, առողջ կին ե, կսովորի. միայն չպետք ե
դուք նրան հարածեք: Քեզ հենց նրա համար եմ առում,
մոր դու ջահել—ջուհուլին ասես, թույլ չտաս, վոր ունիս-
ներն ափեղ-ցփեղ բաց անեն, հասկացա՞ր. ընկերական
ժերարերմունք ցույց տալ:

— Հա, վոնց չե, զիտես, զիտես,—ասաց Մովսումն
ու բնեց գույլին ամբացրած փայտերի ծայրերից:

Նրանցից քիչ հեռվում, զետնի մեջ թաղված կա-
դապարի մոտ նստել եր քսանչորս տարեկան, առողջա-
կազմ Գրիշան և հողի մեջ թավալվելով, կաղապարի
որս կողմում մեխ եր շարում:

Դիրեկտորի ոգնականը դառնալով դեպի նա, ասաց.

— Գրիշա, քեզ ել ե վերաբերում, լսեցի՞ր:

— Ինչո՞ւ չլսեցի, ընկեր Վոյլցով, հո քառ չեմ:

— Հա, ուրեմն գու յել քո շուլուղներին պետք է
վերջ տաս: Այս ընկերն ել ձեզ հետ ե աշխատելու. զոր-
ծին անծանոթ ե, սովորեցրեք, թե ինչպես պետք ե աշ-
խատի:

— Աչքիս վրա, ընկեր Վոյլցով:

Գրիշան վոտքի կանգնելով, շորերի փեշերը թափ-
ովեց և սուրբնով, զնաց դեպի դոմնան:

Վոյլցովը դուրս գնաց: Նրա գնալուց հետո Մովսու-
մը մոտեցավ Տոոյային ու ասաց.

— Դժվար ա յերեսում, հա՞:

Տոոյան չպատասխանեց: Մովսումը կարծելով, թե
Տոոյան վիրավորվեց իր ասածից, ավելացրեց.

— Զե, յիս հենց այնպես եմ առում. վնաս չի, կոո-
դուրես:

— Դե իհարկե, կսովորեմ,—ժպտալով ասաց Տոո-
յան և նրան նայեց:

Մովսումը դույլին ամբացրած փայտերի ծայրերից
բանելով, մյուս յերկու ծայրն ել նրան առաջարկեց:

— Դե մի յեկ ըսենց բանի տեսնանք:

Տոոյան բարձրացնելիս կրնի մկաններում ու մեջ-
բում մի ուժեղ ծանրություն զգաց, բայց իսկույն հո-

վասարակշուփելով, սկսեց Մովսոսմի հետ համաշտափ քայլել:

Այդ ժամանակ մի չարք բանվորներ հետաքրքրությամբ նրան նայեցին:

— Դոչաղ և երեսում:

— Վնաս չունի:

— Աչի կտանի. զըրբզ ա, — ծիծաղելով ասաց մի ուրիշն ու գլուխը մոտեցրեց մեքենային:

— Այ ըսենց, — շարունակեց Մովսումն իր բացարառությունը, — միշտ ել դինջ ընելու: Վեղրոները վերցնելու յես, չուզունը լցնես մեջը, ընտեղից ել դատարկելու յես զալիքների մեջը: Ղալիքներից հանելուց հետո, դնելու յես մաշինի վրեն, ընտեղ կոկվելու յա ու ործափ: Վասսալամ: Վախենալու զատ չկա:

Տոսյան լուս լսում եր նրան և հետեւում ցուցմունքներին:

— Հիմի յել յեկ ցույց տամ ևս փեշի բանալու դայդեն:

Նա Տոսյայի հետ մոտենալով դոմնային, ծայրը տարիակ յերկաթե մի ձող վերցրեց և մոտեցրեց վասարանի յերախին դրած աղյուսին: Աղյուսն իսկույն յետ դնաց և հալած չուզունն սկսեց այնտեղից հոսել:

— Տեսա՞ր, պրծակ, ես ել ըսենց, — յերեխին նման ժպտալով, ասաց Մովսումը:

Տոսյան ներքին ուրախությամբ լսում եր Մովսումի բացարառությունները, կիսատպուատ ուսւերենով: Նու Մովսումից մերթ առաջ եր ընկնում, մերթ յետ եր մնում և ամեն կերպ ուղում եր ցույց տալ, վոր այդ բոլորն իր համար շատ ել դժվար չեն:

Բանվորները ձուլմածքի ուժեղ լույսից պաշտպանվելու համար կապույտ ապակիներով ակնոցներ եցին կրում: Տոսյան դեռ չեր ստացել այդ ակնոցներից: Նու ուժեղ լույսից խուսափելու համար կամ կուչ եր զալիս, կամ ել Մովսումի հետեւն եր անցնում:

Շատերը նրա այդ սկզբնական քնքչությունների վրա ծիծաղում եյին:

Իսկ Մովսումի այդ բացարառությունների ժամանակ

Դրիշան կուտնալով իր մոտ աշխատով բանվորի տկան-
չին, ասաց.

— Տես Մովսումն ու առաջին կինն աշնա դառան:

— ԲՀՅ, ելի դու արդեն անցար քու դյավազություն-
ներին, — կոչտ կերպով պատասխանեց բանվորն ու հեռա-
զավ: Դրիշան խեթ-խեթ նայեց բանվորի հետեւից ու
սկսեց ինքն ել աշխատել:

Դործարանի բակն ընդարձակ է, լիքը զանազան յեր-
կաթներով, հին մեքենաներով և այլ իրերով: Այդ իրերի
միջից, պահակի նման բարձրանում են ելեկորական
հրազդներն ու նայում ժանդոտած յերկաթներին: Բակում
թափված յերկաթների ու մեքենաների արանքով, յեր-
կու կողմի բաժանելով, անցնում են փոքրիկ վագոննետ-
կաների գծերն ու վերջում ճյուղավորվելով, ձգվում են
մինչև ցեխի ներսը: Բարակ ճչալով, վագոննետկաները
մտնում են ցեխերն ու այնտեղից բեռնավորված դուրս
գալիս:

Վագոննետկաների գծերից հեռու կանգնած են ջրի
խողովակներն ու նրանց տակ՝ բանվորական յերկար
լվացարանները:

Դործարանի սուլիչը հնչելուն պես, ցեխերից խո-
կույն դուրս են թափվում բանվորները և ուրախ ծիծա-
ղելով շարպում լվացարանի յերկարությամբ:

Այդ ժամանակ ե, վոր փչում և դործարանի սուլիչն
ու սկսվում ե յերկրորդ հերթը:

Հինգ բոպե դադարից հետո, փոկերն սկսում են
դարձյալ դուռը տեղի ու դոմնան անընդհատ դղբղում ե:

Այդ որը, բոլորից ուշ ցեխից դուրս յեկայի Մով-
սումն ու Տոսյան: Լվացարանի մեջտեղում տեղ չկար,
նրանք կանգնեցին, ամենավերին մասում:

Տոսյան մի նայեց Մովսումին և ինքն ել կռանալով
նրա կողքից, ամաչկոտությամբ սկսեց լվացվել:

Լվացարանի հակառակ ծայրից շատերը վիզներն
յերկարացրած նրան եյին նայում:

Միխայելովը դլուխը բարձրացնելով, նայեց Տոսյա-
յի արեկ տակ կարմրին տվող լիքը թերերին և արմունկով
հելով իր կողքի բանվորին, ասաց.

— Սատանան տանի, յավ ապրանք ա... Նա բերնի
ջուրը կուլ տալով, իր ասածի վրա սկսեց քրքջալ:
— Վորդնած ատամիդ տակը վոչինչ ել չի ընկնի,
ախորժակդ մի գրգռիլ:
— Ետ գեռ կտեսնե՞նք...

3

Հետեյալ որն ուրախ յերգելով, Արսեն Ամիրյանը
մտավ ձուլարան: Մոտ 35 տարեկան, նիհար ու յերկայ-
նահասակ մի մարդ եր նա:

Յերեկ նրա հանգստյան որը լինելով, Տոսյայի մա-
սին վոչինչ չզիտեր:

Գործարան մտնելուն պես, հենց վոր աչքին ընկալ
Տոսյան, նա զարմացած սկսեց նրան նայել: Ուշագրու-
թյամբ Տոսյային նայելով, մոտիցն անցավ, քիչ հեռա-
նալուց հետո կրկին յետ նայեց ու դիմեց մի բանվորի:

— Ես ո՞վ ա:

— Եստեղ ա աշխատում:

— Վա՛, — զարմացած բացականչեց նա ու յետ դառ-
նալով գնաց նրա մոտ:

Տոսյան կանգնել եր մեքենայի մոտ: Նա չիկացած
խողովակն ունելիով դուրս բերելիս, չկարողացավ պա-
հել և խողովակն ընկալ հողերի մեջ:

Տոսյան ամաչկոտությամբ Արսենին նայելով, կա-
րաց ասաց.

— Ես ինչ ծանր եր...

Արսենը, լուս, Տոսյայի ձեսքից վերցրեց ունելին ու
խողովակը բարձրացրեց:

Նա խողովակը զնելով իր տեղում, վերադարձավ,
ունելիքը հանձնեց Տոսյային ու կրկին հետաքրքրու-
թյամբ նայել սկսեց:

Տոսյան շնորհակալությունն հայտնեց և շարունակեց
աշխատանքը:

— Ակար ինչո՞ւ յեք նման աշխատանքի գալիս. մի՞-
թե ուրիշ գործ չկա, — քիչ լոելուց հետո ասաց Արսենը:

— Ի՞նչ կա վոր. Թող կանայք ել սովորեն ծանր աշ-
խատանքի:

— Առվորելուն վոչ վոք դեմ չի լինիլ, յեթե դրանից
մի բան դուրս դա... Բայց դե ձեր սովորածն ել ա՞յս, հո-
պես ա լինում ելի...

Տոսյան ամաչելուց շիկնեց ու լոեց: Նա չկարողա-
ցավ առարկել, հետո փորձեց մի նոր խողովակ տեղա-
փոխել մեքենայի մեջ:

Այդ բոյոր շարժումների ժամանակ, Արսենը կրքոտ
հայացքով նրան եր նայում: Տոսյան քրտնել եր: Տաքու-
թյունից նրա այտերն ու շըթունքները կարմրել եյին:
Շարժումները կատարելիս նկատելի կերպով իրար եր
դալիս նրա բարձր ու լիքը կուրծքը:

Արսենը Տոսյային թողնելով, մոտեցավ Գրիշային:

— Հր, Գրիշա, վո՞նց ա:

— Վնաս չունի:

Նրանց բնդհատեց Կոստյա Յերմոլովը—մոտ քսան-
յերեք տարեկան, վոչ շատ հաստ, բայց լայնաթիկունք
ու տառղջ մի տղա: Կողքներովն անցնելիս, Կոստյան մի
խորը հայացք ձգեց նրանց վրա և տառղ անցավ: Նրանք
աչքերով հետեւցին Կոստյային, մինչև վոր նա բավա-
կանաչափ հեռացավ:

— Շան վորդի, չնորհքին նայիր և ուղարնիկությա-
նը,—Գրիշային զառնալով տասց Արսենը:

— Հարվածային ա, համա քթին վոր մի հարված-
տառ, ջանը դուրս կղա:

— Էղար եծի նման սատկում ա, Համա ոռճիկից մի
կոպեկ ելա չի խարջում: Սաացածը զայոմի յե տալիս:

Այդպես զրուցելով, դույլը վերցրած նրանք մոտե-
ցան դոմնային:

— Գիտե՞ս ինչ, Ամիրով, ասում ա յեթե զայոմիս
փող ընկնի, բոլորն ել ուղարկելու յեմ մեր գյուղի կոլ-
խողին:

— Հորդ չմարսածն ա ուտում: Շան նման ստում ա:
Նա բնակենց ա տուում, վոր հետվից լսողներն ել ասեն, թե
հա, իսկական հարվածային կոմսոմոլ ա: Նա սկի
«զուրս» չի զնում, վախենալով, վոր կքաղցի, հիմի յել
փողը դյուզն ա ուղարկո՞ւմ: Նիսյա խոսքեր են:

Նրանց խոսակցության ընթացքում լցված զույլից

Հալոցքը թափվում եր զետնին։ Այդ նկատելով, Կրյու-
կովը գոռաց։

— Ես ի՞նչ ա· ի՞նչ եք ոեխներդ ծոել։ Զե՞ք տես-
նում, վոր վեղբոն լցվել ա:

— Դե լավ, մի գոռա։ Քիթներս ել չենք մաքրելո՞ւ—
ասաց Արսենն ու բռնեց գույլին ամբացրած փոյտերի
ձայրերից։

— Քիթս, քիթս, քիթդ հո վորթնել չի։ Եսքան ել
խոսել կլինի։ Ախը փշանում այս։

— Եհ, լավ, փշացողը հորդ ապրանքը չի։ — Վրա
ավեց Գրիշան։ — Ենպես ախոսում, տսես փշացողն աչքի
իիսն ա։

— Դու հալա մեջ մի ընկնի, ծույլ մոզի։ Գործաքա-
նի զազրը գու ի՞նչ ես իմանում։ Քոնր են ե՝ փող ստա-
նոս ու հայզե։

— Լսով, լավ, գիտեմ, հորդ սպիտակ վոռկաբները
գործաքանի հիմունքն են փթել։ Քեզ ել գիտենք։ Հաս մի
պարծենա։ Գլխներիս մեծավոր ազանել, — դույլը դկո-
նով խփելով ու բորբոքված ասաց Գրիշան։

— Եհ, զե քեզ հետ ի՞նչ խոսեմ, — դժգոհությամբ
ձեռքը թափահարեց Կրյակովն ու անցավ։ — Դու ոկեաք և
տաշներում աշխատեցիր, վոր ետ հաստ զգիդ տալով
բռնեցնեցին։ Իսկ հիմա ի՞նչ։ Քեզ հոմար են կարծիր
կրիշկեն ել ա ափսոս, վոր դնում ես եղ կեղասու ծո-
ցումդ։

Կրյուկովի գնալուց հետո Գրիշան ելի ի՞նչ վոր
փնթինթաց, ապա նրանց մոտեցավ Միխայլովը։

— Հը, հյուսիսի արջն ելի ի՞նչ եր ուզում ձեզա-
նից, — ասաց նա Կրյուկովի հասցեցին։

— Կարեւոր տեղդ եր համբուրում, ի՞նչ սկառք և տ-
սեր։ Նրան չես ճանաչո՞ւմ։ Դարձյալ դելի ամեստարան
եր կարդում ելի։

Միխայլովը կարծես մի կարեւոր դազտնիք հազոր-
դելու համբար, ամելի կոացավ գեալի Արսենը։

— Լսիր, Ամիբովի, նրանք իրենց եշի տեղ են դքիյ,
ուզում են մեզ ել իրենց ջրերում լողացնել։ Ի՞նչ ե, կոր-
ծում են թե դործարանն ամբողջովին իրենցն ե։ Իցինց

Հարգածային են ընտրում, անընդհատ աշխատառմ են, վարչության առաջ լավ աշխատողի անուն շահել և իրենց ախմախությունների շնորհիվ ուզում են մեղ ել հետեւներիցը քաշ տալ: Գիտե՞ս, ինդուարալիզացիայի ժամանակ ամբողջ ոռնիկներն այնտեղ են գցում և մեղ ել մրցման հրավիրում: Կարծում են, թէ մենք ել ենք իրենց նման վիզներս թոկ զցել: Ետ մեկը լինիլ չի: Ինչո՞ւ պետք ե յես աշխատեմ, ուրիշին տամ:

— Սպասիր, յնըր շատ կնեղացնեն, յես իմ անելիքն զիտեմ... Ինձ Գրիշա կասեն, թույլ չեմ տա, վոր ամեն մի ախմախ գլխիս մեծություն տնի:

Նրանց այդ խոսակցությունը լսելով, բանվոր Աղա-ջանը թեքվեց իր ճախարակի կողմն ու ասաց.

— Տրոյկան ելի ժողովի ահա՛, — նա նորից կռացավ մողելի վրա:

4

Աշխատանքը զաղարելուն պես, յերբ Տոսյան գործարանից դուրս եր զալիս, Միթայլովը մոտեցավ նրան:

— Դուք վո՞ր համարը պետք ե նստեք:

— Յես տրամփայով չեմ գնալու: Մենք այստեղից քիչ ցածր ենք ապրում:

— Հա՛, ուրեմն մենք միասին ենք գնալու: Լով ե: Իսկ յես ձեզ չեմ խանգարում հո:

— Վոչ, ինչո՞ւ, խնդրեմ, — ասեց Տոսյան և նրանք միասին քայլեցին:

Լոյն փողոցը, պղաոր զետի նման զիգ-զագներով ձգվում եր մինչև ծովն ու այնտեղ հատնում:

Փողոցի յերկարությամբ ձգվող ակացիոների փոշեպատ տերեները կեսորվա տաքից թառամել եյին և դլուխները կտիսել:

Նրանք սկզբում քայլում եյին լուս:

Նրանց հետեւ գանդաղ քայլերով զալիս եր Կոստյո Յերմորովը: Կոստյան տեսնելով նրանց միասին, թովեց և մյուս մայթն անցավ: Նրանք չնկատեցին Կոստյային և շարաւնակեցին քայլել:

— Դուք առաջ վո՞րաեղ Եյիք աշխատում, — չդիտու ինչու ժպտալով, վերջապես հարցրեց Միթայլովը:

— Յես առաջին անգամն ե, վոր դործ եմ անում
ընդամենը վեց ամիս և Ռուսաստանից մեր գալք:

— Յերեկի ձեր ամուսինն ե աշխատում:

— Ամուսինս... ամուսին չունեմ...

Նրանք կրկին լոեցին:

... Տոսյան դեռ տասնութ տարեկան թովուուն աղջիկ
եր, վոր առաջին անգամ հանդիպեց Իլյային:

Նրանք ամուսնացան և գյուղ գնացին:

Գյուղում լավ եր: Իլյան գյուղի ուսուցիչն եր, ոռ-
հիկ եր ստանում և նրանք խաղաղ ապրում եյին:

Իլյային գյուղում շատ եյին հարգում: Ինչ կարեռ
դործ եր լինում, դիմում եյին նրան, նրանից խորհուրդ
հարցնում:

Յերբ նա քաղաքից յըադիր եր ստանում, գյուղացիք
իսկույն շրջապատում եյին նրան: Նա կարգում եր, բա-
ցատրում և պատասխանում նրանց տված հարցերին:

Լրադրներում հաճախ զրված եր լինում նաև այն
գյուղի մասին, վորտեղ Իլյան ուսուցիչ եր: Նման դեպ-
քերում գյուղացիներից շատերն ուրախանում եյին,
հարցերի տարափով դիմավորում Իլյուշային ու զարմա-
նում, թե եղ «գաղղեթ» դրողն ի՞նչ ե իմանում «այսինչ»
բանը կատարվել ե իրենց գյուղում:

Մի անգամ թերթում ծիծաղելի կերպով նկարել ե-
յին կուլակ Յեֆիմին ու տակն ել զբել նրա մասին: Գյու-
ղացիք անվերջ կարդում եյին ու ծիծաղից թուլանում:

Հենց վոր Յեֆիմն իմացալ, թե իր մասին թերթում
դրած է, փրփրեց, բերնի թուքը ցրիվ տվեց և գյուղա-
ցիների մոտով անց ու զարձ անելով, ասեց.

— Թող գեռ ծիծաղեն. յես դրանց ցույց կտամ...

Ու մի որ ել, յերբ Իլյան դնաց շրջանի ուսուցչական
խորհրդակցությանը, ել չվերադարձավ...

Լենիչկան հաղիվ յերկու տարեկան կլիներ:

Ոնցալ մի քանի որ և զուղի հովիվները նրան զտան
մի քարի տակ ջախջախված...

Հետո Տոսյան տեղափոխվեց քաղաք: Քաղաքում
ինքը լվացք եր անում, իսկ մայրն արեածաղիկ եր ծա-
խում: Բացի դրանից, նա ապահովագրական դրամար-

130
կղից ստանում եր քսանյոթ ռուբլի և դրանով մի կերպ լոլա եյին գնում։ Այնուհետև նրանք այն քաղաքից եւ տեղափոխվեցին նորը և Տույան այդտեղ գործի մտավ։

Համել եյին կիսաքանդ ու ցածր պատերով տանը։ Տույան վոտքի մեկը զոնից ներս տանելով, նայեց Միխայլովին և ասաց։

— Յտեսություն։

— Այս դուք այստեղ եք ապրում, — զլուխը բարձրացնելով հարցըն նա։

— Այս այստեղ ենք ապրում։ Բայց չգիտեմ, հնարավո՞ր ել իննելու, վոր մի նոր սենյակ տեղափոխվենք։

— Ինչո՞ւ չե։ Դիմեցեք գործարանի դիրեկցիային, գուցե նա միջնորդի։ Յեվ հետո, ի՞նչ կա վոր, այդ մասին միթե մենք չենք կարող մտածել։

— Շատ չնորհակալ եմ, — ասաց Տույան Միխայլովի վերաբերմունքից զգացված։ Նրան թվաց, վոր բոլոր բանվորներն եւ Միխայլովի նման բարի եյին և նրանց հետ աշխատելիս ինքը յերբեք չի տրտնջա։

Միխայլովը զլուխը խոնարհելով, ցտեսություն առեց և հեռացավ։

Յերեկոյան այդում նա հանդիպեց Արսենին, Գրիշային և ելի մի յերկու հոգու։

— Տղերք, ես որ աղավնյակին յես ճամբեցի, — առաջ ընկնելով, ասաց Միխայլովը։

— Բախտով փորձեցի՞ր։

— Գրբաց չկար, չկարողացա փորձել, համա աքլորների կանչից դուշակեցի, վոր լավ ել լինելու։

— Եհ, աքլորագլուխ, աքլորները քեզ վորքան են խարել….

— Ես անդամ չեն խարի։

— Տեսնենք….

A 38/71
Տույան հետզհետե ավելի յեր ընտելանում գործին։ Նա առանց տրտունջի բոլորի հետ հավասար աշխատում եր։

Յերբեմն ել պատահում եր, վոր մյուսներից շուտ եր

աշխատանքի դալիս։ Այսպիսի գեղջում նա մաքրում եր մեքենաները, բռնում, դույլերը պատրաստում, մինչև տշխատանքն սկսվիլը։

Բայց հաճախ նրան չարչարում եր Տրոյկան՝ ինչպես րանզորներն եյին ասում Արսեն—Գրիշո—Միխայլովյան յեռյակը։

Ենոյակի անդամները չուղունահալոցային ցեխում Տոսյային մոտ եյին։

Եերբ նրանցից մեկը բաց եր թողնում դույլի մի կողմը, իսկույն տեղը մյուսն եր բռնում։

Այսպիսով Տոսյան անընդհատ դույլի մի կողմում եր լինում, իսկ մյուս կողմում փոփոխվում եյին յեռյակի անդամները։ Յերբեմն ել «տրոյկան» իր գրոհներով «տույլի հեռուն եր դնում»։

Նրանք մի անգամ վորոշել եյին, վոր ճաշի դադարին, Արսենը մի յեփած տաք ձու դցի Տոսյայի ծոցը։ Ձուն այնտեղից պիտի հաներ Գրիշան, իսկ Միխայլովը մոտենալով, պետք ե թույլ չտար։ Նրանք այսպես եյին ուայժմանավորվել, վոր Գրիշայի ձեռքն ավելի յերկար մնար Տոսյայի ծոցում։

Հետեւյալ որը, դուրսկից հետո, յերբ Տոսյան ուղղում եր նախաճաշել, Արսենը զգուշությամբ մատենալով, ձուն շարտեց դեպի նրա ծոցը, բայց հակառակ սպասածին, ձուն դէրվեց ընկալ Տոսյայի դողը։

Նրանց նախատեսած պայմանն ել հնարավոր չեղավ կատարելու։

Գրիշան ծիծաղելով մատեցավ Արսենին։

— Եյ, Ամիբով, եղ ի՞նչ կանդրաբանդություն ես անում։

— Բիլյարդ հո չե՞ս խաղում։

Տոսյան ցասմլից հայացքով նայեց Արսենին և ձուն ուժեղ կերպով խփեց նրա գլխին։

Կիսայեփ ձվի դեղնուցը ծորում եր Արսենի ճակատից, իսկ Միխայլովն ու Գրիշան քրքջում եյին այդ տեսարանի վրա։

Արսենը բորբոքված նայեց ծիծաղողներին, ապա

Հարձակվեց Տոսյայի վրա, բայց Աղաջանը նրա ձեռքն
ամուր բռնելով՝ կանգնացրեց :

— Չոփուռ, բաց թող :

— Ձե՞նդ :

— Չոփուռ, քեզ ասում եմ բաց թող :

— Տո զեղնած եծ քեզ ասում եմ ձենդ կտրիր :

Արսենն ավելի կատաղեց : Նա ուժեղ ձգեց Աղաջանի
ձևովից ազատվելու համար, բայց վերջինս այնպես սեղ-
մեց, վոր նա ավելի կուչ յեկավ :

Յերբ Գրիշան մեջ մտավ Արսենին պաշտպանելու,
Կրյուկովը ջղայնացած միջամտեց .

— Ե՞ր, ուրիշ, պոչչդ քեզ քաշիք, սա խուլիցանանոց
չի, հասկանո՞ւմ ես :

Կրյուկովը ջղայնությունից սպրթնել եր, նրա ծեռա-
քերը գողում ելին :

Միջադեպից հետո ամբողջ որը ցեխում «տրոյիկ»
մասին ելին խոսում : Բոլորն ել լուռ ելին ու մի տեսակ
բորբոքված :

Հետեւալ որը գործարան մտնելուն պես, հենց վոր
Գրիշայի աչքին ընկավ պատից կախված խոշոր տառե-
րով հայտարարությունը, թե ճաշի դադարին ակում-
բում արեւելքան համերդ կլինի, նրա դեմքը պայծառա-
ցավ :

Մինչև զուղովի տալը, նա մի քանի ոլրիոմներ կա-
տարեց նոր սովորած լիզենզայից և հենց վոր սուլիչը
հնչեց, ցեխից խոկույն դուրս պործավ դեսպի ակումք :

Ակումբում միայն յերաժիշտներն ելին :

Նո խոկույն բնմ բարձրացավ և կանգնեց խմբի մատ :

Հետո հավաքվեցին բանվորները գործարանի բոլոր
ցեխերից :

Տոսյան անդավորվեց մեքենայական ցեխից յեկած
բանվորուհիների մատ :

Առաջին համարում նվազեցին ասխական մի տիտոր
մելոդիա :

— Եխ վա՛խ, —վերջում հառաջեց Մովսումը :

— Տո, մի ուրախ բան նվազեցեք ելի, ի՞նչ եք ճան-
ձի ազգոցը գցել, —յերշիկի կոթից կծելով, ասաց մի
ուսւ բանվոր :

— Վա՛, չե՛, ի՞նչ ասըմ ես, ետ հենց լավ ա: Ուստա, — դիմեց նա յերաժշտախմբի ղեկավարին, — բաշընադյոնըմ, մի բայաթի շիրադ...

Բարձրացավ ընդհանուր աղմուկ, բանվորներից վոմանք պահանջում եյին ասիական յեղանակներ նվազել, վոմանք ել՝ ժողովրդական:

Գրիշան մոտեցավ խմբի ղեկավարին և պատվիրեց «մի լեզգինկա» բայց նորից աղմուկ բարձրացավ:

— Ելի՞ կոտրած գղալը մեջ ընկավ:

— Դավայ Խրիստիկ:

— Խրիստիկ, Խրիստիկը թող պարի:

Այնուամենայնիվ Գրիշան պարեց:

Նա մոտեցավ Տոսյային և պարի հրավիրեց, բայց կտրուկ մերժում սատացավ:

— Եես յերբեք չեմ պարել. յես պարել չգիտեմ:

— Բիս:

— Խնդրում ենք, — կանչեցին այս ու այն կողմից: Տոսյան չպարեց: Գուղոկը հնչելուն պես բոլորը վոտքի կանգնեցին:

Ակումբից դուրս գալիս, Գրիշան հավասարվեց Տոսյային:

— Շան քած, քո աչքը հո յես չեյի հանել: Ի՞նչ ե, կեսդ կպակսե՞ր, վոր հետո պարեյիր:

— Նախ քիչ քաղաքավարի, յերկրորդն ել ես իմ կամքիս տերն եմ:

— Կամքս, կամքս. թքել եմ յես քո կամքիր վրա: Դու ի՞նչ չուն ես, վոր կամք ել ունենաս:

— Շունը դու յես, խուլիգան...

— Դե լե՛զուդ, քած — Գրիշան այնպես հրեց, վոր Տոսյան վեր ընկավ սանդուկիքի աստիճանի վրա:

Նրանց հետեւից յեկող մյուս ցեխի բանվորները կարծելով, թե կատակ են անում, ծիծաղելով թողին ու հեռացան:

Տոսյան վոտքի կանգնեց, շորերի փոշին թափ տվեց և լաց լինելով դնաց:

— Եղ ինչո՞ւ յես լաց լինում, — բակում դեմ դուրս դալով, հարցրց կոստյա Յերմոլովը:

Տոսյան չպատասխանեց : Նա հենց այնպես լաց լինեց ել մտավ ձուլարան :

Կոստյան նայեց նրա հետեւից, գլուխն որորեց ու ինքն ել ներս զնաց :

6

Այդ բոլորից հետո տրոյկայի հալածանքը Տոսյայի դեմ կարծես թե թուլացել եր : Այնուհետև նրանք մի կողմ քաշված, առանձին ելին աշխատում :

Տեսնելով, վոր առաջին կնոջ սլաշտպանում եւ ամբողջ ցեխը, գրա համար ել նրանք սկսել եյին խույս տալ Տոսյայից :

Միխայլովն ել լսել եր, վոր Կոստյա Յերմոլովը «տրոյկա»-յի հալածանքի մասին խոսել եւ կոմյերիտ-քիջի քարտուղարի հետ :

Քարտուղարը Կոստյային ասել եր, վոր նա բջիջի բյուրոյին այդ մասին մի նյութ տա, բյուրոն կքննի, տյնտեղից ել խնդիրը կաեղափոխի տեղիում :

Միխայլովն իր լսածը պատմել եր տրոյկայի մյուս անդամներին և նրանք վորոշել եյին կնոջից յետ կանգնել :

— Շան վորդին հալրաթ ինքնա ուղում ձեռք դցել, — տառմ եյին նրանք :

Այդ որն ակումբը լիքն եր բանվորներով : Աշխատանքից հետո բոլորն ել հավաքվել եյին ակումբը խնայողական գրամարկիդի ներկայացուցչի զեկուցումը լսելու:

Յերբ զեկուցումը վերջացավ, իսկույն բեմ բարձրացավ մի բանվոր :

— Ընկերը շատ դուզ ա խոսում, — ասաց նա, — մեղանից ամեն մեկն ել փող ա յետ գցում, համա եղ փողն անտեղի մնում ա տան պուճախում ընկած : Թե վոր ետ փողը սրերկասսը մնալուց համ մեղ ա ոզուտ, համ ել մեր կառավարությանը, ել ինչի՞ չտանենք ընդեղ : Յես իմ կողմից ամիսը տասը մանեթ եմ գցում : Ի՞նչ կասեք :

Նրա խոսքերը և ուրախ տոնը դահլիճում առաջացրին և ծիծաղ և ընդհանուր ծափահարություն :

Նըանից հետո րեմ բարձրացավ Արսեն Ամիրյանը :
Դահիճում առաջացավ ընդհանուր շնորհ :

Արսենը րեմում նախ հազար, նայեց դահիճում
նոտողներին ու ասաց .

— Մեր գեկուցողը շատ լավ ա խոսում, համա իմ
կարծիքովս մի բան մոռանում ա:

Նա կրկեն կանգ առավ և սկսեց դիտել դահիճում
նոտածներին : Եշուկները լրեցին, սպասելով թե ինչ
կատար :

— Իմ կարծիքովս մեր բանվորները միլիոններ չեն
ոտանում : Ստացած ոռօճիկները հլա առւն չհասած,
պրծնում ա, ուր մնաց, թե...

— Ո՞վ ա մեղավոր, վոր դու ոռօճիկ ստացած որը
տրամվայիր ճամփեն փոխում ես դեպի դինու պաղվա-
լը, — տեղից ընդհատեց մեկը :

— Դե լավ, ել մի սկսի, դու եյիր պակասը, — ջղայ-
նացած ասաց Արսենն ու շարունակեց : — Բնկերներ, յես
առաջարկում եմ...

— Փողերն ուղիղ պաղվալը տանել, — ընդհատեց
դարձյալ նույն բանվորը և բարձրացավ բարձր ծիծառ :

— Յես առաջարկում եմ, — ուղեց շարունակել նա,
բայց այլևս նրան թույլ չտվին : Ակսեցին այս ու այն
կողմից բացականչություններ :

— Ձենդ կտրի՛ր :

— Ց'ա՛ծ...

Նա ջղայնացած սկսեց բեմից գորգոռալ, բայց լսող
չկար : Նրա ցածրանալուն պես, մի ուրիշն իսկույն բեմ
բարձրադավ :

— Բնկերներ, Ամիրովին ո՞վ չի ճանաչում, յեթե նու
փողը սրերկասսա զցի, հապա դինու պատվայներն ո՞վ
գնա, բուլվարի ալեյներն ո՞վ չափի : Ամիրովին առաջին
անդամն ենք լսում : Արինակ, շեշտեմ հենց ինդուս-
տրիալիզմի յերրորդ դայտմը : Չեք հիշում թե Ամիրո-
վը վոնց եր գոռում, թե փող չունենք, փլան-փոտան : Իմ
կուրծ դադախարավ ամեն մարդ ել կարա մի դատ ինա-
յուղական անել : Յես խոսք եմ տալիս, ամսական քանա-

ոռուրի խնայողական անել և թաղ ուրիշներն ել իմ որի-
նակին հետեւեն:

— Ճիշտ ա...

— Շատ ճիշտ ա...

— Այս ամսում քատնուհինը ոռուրի խնայողական
արկղը զցելով, մրցման եմ հրավիրում Աղաջան Մելքո-
նովին, Խվան Կրյուկովին, Անաստասյա Դրադովային և
Մայսում Մոխտաբովին:

— Եթօ

Այդ ժամանակ Մովսոսը տեղից բայցականչեց.

— Հնդեր, եյ ընդեր, —կանչում եր նախագահին, —
յես ըտքանը կարալ չեմ: Իմ քուլֆաթու մեծ ա, համ դե
սխոր մանեթ ել յես եմ զցում և կոստի նման մյուսներին
զառ անում...

Բարձրացավ կրկին ընդհանուր ծիծաղ:

— Սադ ոլ Մովսում, —բացականչեց մեկը տեղից:

Մովսումը կարմընելով, նայեց շուրջը:

— Կեցցե չուզունահալոցային ցեխը, —բացական-
չեց մի ուրիշը:

Հետո ամաչելով բեմ բարձրացավ Տոսյան:

Նա կյանքի մեջ առաջին անգամն եր ժողովում խո-
սում:

Տեսնելով, վոր բոլորի աչքերն ել դեպի իրեն են ուղ-
ղիած, նա անհամարձակ մի քանի քայլ առաջ յեկալ ու-
սկսեց.

— Ընկերներ, յես մինչեւ այժմ ամիսը քան, յերե-
սուն ուրիշ յեմ ստացել: Այժմ մի քանի անգամ ավել եմ
առանում: Խոսք եմ առալիս, վոր ամիսը յերեսուն ուրուրի
իդցեմ...

Նրա վերջին խոսքերը թաղնվեցին ծափերի ու բա-
յականչությունների տակ:

Հետո խոսեցին շատերն ու մրցականչն ընդհանը-
ցավ...

Ակումբից զուրս զալուց հետո Տոսյան նայեց արել
մարզող շողեցին, խորը շունչ քաշեց, յերեսի քրտինքը
մաքրելով սկսեց աստիճաններից զածքանալ:

Դարձասից զուրս զալիս նրան մոտեցավ Արսենը:

— Ասում ես ըտենց ելի, ընկեր Տոսյա:
Տոսյան չպատասխանեց: Նա լուռ քայլեց, իսկ նրա
հետ՝ Արսենը:

— Դաա՞, —արեց Արսենն ու նրանք կրկին լռեցին:
Ճանապարհին Արսենն ուզում եր ինչ վոր բան ասել,
չղիտեր ի՞նչ և ի՞նչպես ասել: Դրա համար ել նա մտազ-
բաղ եր քայլում: Նա կամ Տոսյայից առաջ եր ընկնում
կամ յետ մնում:

Տոսյայի ներսում մի կռիվ եր սկսվել: Նա մտածում
եր, թե ի՞նչ ե ուզում այդ մարդն իրենից, ինչո՞ւ յե
կրկին հետևից ընկել: Նա ուզում ե այդ բոլորի մասին
բացարձակ ասել Արսենի յերեսին, բայց չեր համարձակ-
վում և այդպես լուռ քայլում ելին:

— Գիտես ինչ, Տոսյա, —լուռթյունը խղեց վերջա-
պես Արսենը, —յես նկատել եմ, վոր դու վերջերս դեպի
ինձ մի տեսակ ես դառնել:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Այ, որինակ, հենց քու այս պատասխանը: Են-
պես կոպտությամբ ես պատասխանում, վոր կարծես յես
քո թշնամին լինեմ:

— Բայց ինչո՞ւ համար են այս բոլորը:

— Այս բոլորը նրա համար են, վոր դու մարդկանց
ճանաչես և վոչ թե խոսքերից յեղրակացություններ հա-
նես:

— Որինակ:

— Որինակ ես ուզում: Որինակ հենց յես: Գիտե՞ս
ինչ, Տոսյա, թեև բնավորությունս չար ե, լեզուս կո-
պիտ, համա դես սիրտս... ի՞նչ ասեմ, յես կուզեյի, վոր
դու այդ հասկանաս: Տոսյա... նու լավ, հարկավոր չի:
Համենայն դեպս իմացիր, վոր ինչ քեզ ասում եմ, այդ
բոլորը շատ ուզելուցս ա...

Տոսյան ծիծաղեց:

— Հավատացնում եմ, Տոսյա, մի ծիծաղիր. Կըեն
կինս իր լակոտների հետ յերկու ամիս ա, ինչ դյուզումն
ա: Եսքան վախտ ա մի նամակ ել ա չեմ գրել: Թող կոր-
չի. դուռակի մեկն ա: Միենույն ա, յես նրա հետ չեմ
ապրելու: Ես բոլորն ինչո՞ւ յեմ ասում: Նրա համար,

զոր դու... այ են որվանից յերբ վոր քեզ տեսա, սրտումս
մի նոր բան գնալով...

Տոսյան կրկին չպատասխանեց: Նա դլուխը կախ
գեռ զնում եր:

— Այ, դու ելի չես խոսում: Բա մի անդամ դու ինձ
չխոսեցնե՞ս:

— Ի՞նչ ես ուզում ինձնից, — դառնությամբ հարց-
րեց Տոսյան և կանգնելով, նայեց նրան շեշտակի:

— Դե լով, Տոսյա, յես ուզում եմ քեզ հետ մի քիչ
յերկար խոսել: Խնդրում եմ դնանք մեղ մոտ: Տանը վոչ-
վոք չկա:

— Շնորհակալ եմ, չեմ կարող գալ, — կտրուկ ա-
սաց Տոսյան և ուզեց բաժանվել, բայց Արսենն առաջը
կտրելով, արդելեց:

— Տոսյա ջան, ինչո՞ւ յես եղակես կոպիտ...

— Թույլ առւր, — ջղայնացած և հրելով, ասաց Տոս-
յան — Ի՞նչ ես ուզում ինձնից:

— Դե ել ինչո՞ւ յես բարկանում:

— Հեռացիր ասում եմ:

— Վոչ, դու պետք ե գաս, — այս անդամ արդեն ստի
պողաբար ասաց Արսենն ու բռնեց Տոսյայի ձեռքերից:

— Դե կորիր, յես թքել եմ քեզ վրա...

Հրելով Տոսյան աղատվեց ձեռքերից և սկսեց շոաս
կերպով հեռանալ:

Նրա գույնն ամբողջապես ղեղնել եր: Կուրծքը հուզ-
մունքից վեր-վեր եր անում:

Արսենը յերկար նայեց նրա հետեւից, ձեռքն ողում
թափահարելով ասաց.

— Միենույն ե, դու իմ ձեռքից չես աղատվի...

Մայրը դռանն անհամբեր սպասում եր:

Տոսյան դալուն պես իսկույն հարցընց.

— Տոսյա ջան, բա այսքան ժամանակ վո՞րտեղ
եյիր:

— Ժողով կար, — անտարբեր պատասխանեց նա և
մտավ սենյակ:

Անիշկան տանը չեր:

Պառավը սեղանն արդին զցել եր: Տույան ներա
մտնելուն պես, առօնց լվացվելու պառկեց թախտի վրա:

— Բալիկ ջան, բա հաց չե՞ս ուտելու:

— Քաղցած չեմ, — դժողովությամբ ասաց Տույան և
Մնլեց մյուս կողքի վրա:

Պառավը կասկածանքով նայեց աղջկան:

— Հիվա՞նդ ես գուցե, Տույա:

— Ե՞ս, մամա, ինչո՞ւ պետք ե հիվանդ լինեմ:

— Հապա ինչո՞ւ յես այդպէս հոգնած, զույնդ եր
մի տեսակ դեղնած ա:

Պառավը դարձյալ տարակուսանքով նայեց նրան ու
ասաց:

— Տույա ջան, լավ թթու րորչ եմ յեփել. հենց մի
քիչ վոր ուտես, ախորժակիդ կրացվի:

— Զե, մամա, քաղցած չեմ:

— Ե՞ս, դե ի՞նչ անեմ, — ցածր ձայնով տսաց պա-
ռավին ու սկսեց ափսեները սեղանից հավաքել:

— Դու կեր, մամա, ինձ մի նայիր, յես քաղցած
չեմ:

— Ե՛, չե, յես ել չեմ ուտում:

Տույան մոր թախանձանքով տեղից վեր կացավ, բայց
մայրը աղջկանը թողեց սենյակում ու զուրս զնաց:

Նա չորերը փոխեց և փոքրիկ հայելու դիմաց
սանդրվելիս նոր միայն նկատեց, վոր զույնը գեղնել ե:

Սանդրվելուց հետո Տույան շտապ տնից դուրս յե-
կավ:

Մայրը կռները ծալած դարպասում կանգնել եր:

— Մամա, զնում եմ այդի քիչ հանդստանալու:

— Հա, զնա բալիկ ջան, — ուրախացած ասաց պա-
ռավը, հավատարվ, վոր աղջկան բան չի պատահել:

Դուրսը զով եր ու խաղաղ:

Տույան դանդաղ քայլերով մտավ այդին: Այդում
մարդ քիչ կար: Նա մի քանի անդամ պատվելուց հետո,
կանգնեց լույն ու կլորիկ ջրավազանի դիմաց:

Ավազանի կենարոնում տաշած քարերից պատրաս-
տած բարձրության վրա կանգնել և վոքրիկ դանդրա-

Հեր Վալողյացի (Աննինի) արձանը: Նրա վլուխը բաց է, ձևաները զբարանում, խորը մտածելիս, լողացող մի բար նրա յետեից վիզն յերկարացը ել է ու յերեք տարեկան վալողիայի կապույտ աչքերին և նայում:

Բարակ ցնցուղից վճիռ ջուրը ծլլալով լիզում և վարդիայի ճակատը, թափվում ավաղանի մեջ:

Տոսյան յերկար ժամանակ նայում եր այդ տեսարանին ու ներքուստ հրճվում:

Նու այնքան մոտ եր կանդնել ավաղանին, վոր դուրի շայոող ջրի ցնցուղից յերեսը թրջվել եր: Տոսյան սպիտակ թագշենակով յերեսը մաքրեց ու կրկին սկսեց շրջել տրդում:

Մի քանի որույտ կատարելուց հետո, նստեց տեսրիախոտ ծառերի տակ մի նստարանի վրա:

Մեկը բարձր ձայնով յերշելով մուենում եր Տոսյային.

Вечерь близенько,
Солнце низенько,
Спешу до тебя
Мое серденько....¹⁾

Նա որորվելով մուեցավ, մի պահ ուշադրությամբ նայեց և մթության մեջ ճանաչելով նրան, տաց.

— Ո՛, Տոսյա, այդ դո՞ւ յես:

Միխայլովն եր: Թույլ, թույլ նստեց Տոսյայի մոտ և կրկին հարցրեց.

Խսկապես ի՞նչ ես անում այստեղ:

— Ինչ վոր դու, — դժգոհությամբ ասաց Տոսյան և յերեսը շուռ տվեց մի կողմ:

— Արեիս ակունքը վկա, Տոսյա, բլբուլ ես, բըլրուլ, — ամելի մոտենալով դեպի Տոսյան, ասաց նա: — Հապա ի՞նչպես ե, վոր մինչեւ հիմա քեզ այստեղ չեմ տեսել:

Տոսյան չպատասխանեց: Միխայլովը յերկար նրա

1) Յերեկոն մոտ ե,
Ալել ցած.
Շտապում եմ քեզ
Սրտիկ իմ ոիբած...

յերեսին նայելով, տեսավ, վոր պատասխան չի ստանում, ասաց.

— Բայց ի՞նչ լավ ել տեղ ես ընտրել, — այս ասելով նա բռնեց Տոսյայի թեկից :

Տոսյան վոտքի կանգնեց :

— Ի՞նչ ե վոր, — վախեցած հարցրեց Միխայլովը :

— Ես տուն պիտի գնամ, — ասաց Տոսյան, տեղից վեր կենալով, բայց Միխայլովն իսկույն կանգնելով, բռնեց նրա թեկից :

— Ինչո՞ւ յես շտապում, խոսում եյինք ելի:

Տոսյան չպատասխանեց և աշխատեց ազատվել նրա ձեռներից :

— Բաց թող:

— Տոսյա ջան...

— Բաց թող, ասում եմ:

Այդ ժամանակ Միխայլովը նրան սեղմեց կրծքին ու համբուրեց, բայց Տոսյան մի ձեռքով ազատվելով, ապակեց յերեսին ու շտապալ նրանից հեռացավ:

Քիչ հեռու նստած մի զույդ բարձր ծիծաղեց: Միխայլովը նայեց նրանց, հայհոյեց և թքելով հեռացավ:

Մայրը նավթի ճրագը թողնելով վառ, ինքը քնել էր: Տոսյան դուռը կամաց թրիկացնելուն պես, մայրն իսկույն զարթնեց և գնաց դուռը բանալու:

— Ինչո՞ւ եսպես շուտ յեկար, — հարցրեց մայրը, հատակում դցած անկողնում պարկելով:

Տոսյան նրան չպատասխանեց: Նա ուշադրությամբ նայեց թաղթի վրա պառկած լենիչկային, կռացավ, քնքությամբ համբուրեց նրա ճակատը, բաց թել ծածկեց ու կրկին բարձրացավ:

Հետո զնաց հայելու առջեւ, տխուր հայացքով նայեց իր մտադրադ դեմքին, ապա պատուհանի առաջ կանգնեց ու սկսեց դիտել դուրսը:

Պատուհանում դրած ծաղկամանի ծաղիկը ժպտուն թերթիկներով նրան եր նայում:

Տոսյան քնքությամբ ձեռքը մոտեցրեց ծաղկին, կարծես նրան բռնլու, կրծքին սեղմելու ու համբուրելու

համար, բայց ծաղկի տերևները սիրածի համբույրից դլուխը թեքող աղջկա նման, սկսեցին հետ գնալ:

Նա այդպես յերկար նայելիս, հանկարծ միտն ընկալ իլլուշայի առաջին համբույրը...

... Աչնանային աստղալից յերեկո յեր: Նրանց վոչ վոք չեր տեսնում: Յերկար խոսելուց հետո, յերը իլյան ուզում եր բաժանվել, հանկարծ բռնեց Տոսյայի թերից, ձգեց իրեն և շրթունքները մոտեցան...

Յերը Տոսյան աչքերը բացեց, իլյան արդեն շտապ քայլերով հետանում եր: Տոսյան յերկար նայեց իլյայի հետեւից, մինչև վոր նա տեսողության դաշտից անհետացավ: Հետո նա վախեցած չորս կողմը նայց, տեսնելով, վոր իրեն մարդ չտեսավ, ինքն ել իսկույն ներս զնաց:

Տոն մտնելուն պես, նա պարկեց քնելու, բայց քունը չեր տանում: Միրտն անկանոն կերպով եր զարկում: Շրթունքներն այրվում եյին, բայց նա այդ բոլորից մի տեսակ հրճվանք եր զգում: Նա յերկար ժամանակ լեզուն չեր մոտեցնում շրթունքներին, վորպեսզի իլյայի համբույրի հետքն այնտեղից չգնա:

Այդ հիշողության ընթացքում, արցունքի մի խոշոր կաթիլ նրա այտի վրայով գլորվելով ընկավ սպիտակ ծաղիկի տերեկի վրա ծաղիկը կուացավ:

Մայրը գլուխը բարձրացրեց և տեսնելով աղջկան դեռ պատուհանի առաջը կանգնած, կամաց հարցընց.

— Տոսյա ջան, եղ ինչո՞ւ չես քնում:

Տոսյան լուռ, առանց մորը պատասխանելու, շորերը հանեց ու մտավ անկողին:

Մոր շարժումներից լենիչկան զարթնեց, վերմակը վրայից դեռ շպրտեց, բայց մայրը նրան հանգստացնելով, ասաց.

—Քնիր, լենիկ ջան, յես եմ...

գիշերվա անքնությունից եր, Ան աղջկա լադեր ուզար-
կելու միտքն եր, վոր հանդիստ չեր տալիս:

Աշխատանքի ժամը լրանալուց հետո, նա առանց
լվացվելու տուն յեկավ, լվացվեց և թեթև ճաշեց ու պառ-
կեց թաղթի վրա:

Մի քիչ հանգստանալուց հետո վերկացավ Լենիչ-
կայի չորերը փոխեց և պատրաստվեց դուրս զնալու:

— Վաղը լենան պիոներական լագեր և զնալու, այ-
սոր միասին քիչ զբոսնենք, — ասաց մորն ու դուրս յե-
կավ:

Փողոցից դեռ մի քանի քայլ չանցած, իսկույն նրանց
դեմք դուրս յեկավ Գրիշան, իրեն հասակակից մի քանի
տղաների հետ: Նրանք բարձր ձայնով յերգելով ու դոր-
դոռալով անցնում եյին:

Նա Տոոյային տեսնելուն պես, կանգնեց:

— Գարնան ըլլուլ, այդ ո՞ւր:

Տոոյան չլսելու դրեց ու անցավ:

Նրա այդ վերաբերմունքի վրա Գրիշայի ընկերները
ծիծաղեցին:

— Բարեդ քամին տարավ, Գրիշա:

— Կոկորդ ծարավ մնաց, ախպերս:

— Դե թքած. նրա մերն ել... ասաց Գրիշան ու ան-
ցան:

Յերբ բալական հեռացել եյին, Լենիչկան հարց-
ից.

— Մամա, նրանք ոքվե՞ր եյին:

— Ես ի՞նչ դիտեմ, խուլիդաններ... Նրանք յեր-
կուսով լոեցին, իսկ քիչ հետո, Տոոյան ավելիացրեց.

— Բանվորներ են: Նրանցից մեկը մեղ մոտ և աշ-
խատում:

— Ա՞մ, — զարմացավ սողիկը, — բայ բանվորն ել
խուլիդան կլինի՞:

— Ինչո՞ւ չի լինի, յերբ նա իր կյանքն ամբողջապես
խուլիդանների հետ անցկացնի, հապա ի՞նչ կլինի:

Նրոք, Գրիշան սկզբից վարսավեր եր: Հարրած ժա-
մանակ փողոցում դանակով խփել եր մեկին և յերկու
տարի բանտ եր նստել: Բանտից դուրս գալուց հետո

դործարան եր մտել . սակայն իր նախկին սովորությունը
դեռ չեր թողել :

— Եմամա , մեղ մոտ ել մի այդպիսի պիտոներ կա :
Ենքան չարն ե , մամ ջան , ենքան չարր , վոր չեմ կարող
տաել : Իր դասերը չի պատրաստում : Աւսուցիչների հետ
միշտ կոխով ե անում : Նա ծնողներ չունի : Իր տատիկի
մոտն ե ապրում :

— Տեսնո՞ւմ ես , աղջիկս , զու խելոք յեղիք :

— Իսկ լյովան եղողես չի : Նա ենակես գեղեցիկ նկար-
ներ և նկարում :

— Իհարեկե , հենց նրա ծնողներն ի՞նչ պակաս մար-
դիկ են վոր :

— Այդ ի՞նչ , քաղցր—քաղցր զբուցում եք , — հան-
կարծ նրանց զեմք զուրս գալով , ասաց Կոստյա Յերմո-
լովը :

— Այս , աղջիկս իրենց կողեկտիվիցն ե սկսամում , —
բարեկելով , ասաց Տոսյան :

— Աւրեմն սա քո աղջի՞ն ե :

— Այս , խնդրեմ ծանօթացիք , — ծիծաղելով ասաց
Մի որ հետո, Կոստյայի տաքությունն ավելի բարձրացավ, նա սկսեց շարժումներ անել, թեև թը վերմակի տակից դուրս շղթանելով, ջուր խնդրել :

Նրան ջրի փոխարեն կիսել տվեցին, և նա հետզհետե աչքերը բաց անելով, շուրջը խմբվածներին սկսեց ճանաչել :

Մորո թույլ եյին տվել, վոր գիշերները գա վորդում մոտ մնա : Կուսական սիշերվա կիսին աչքերը բանալով, ճանաչեց նրան և նրա լացակումած աչքերը տեսնելով, ուզեց ինչ մոր բան տսել, հետը խոսել, բայց չկարողացավ :

Հիմանո և դրությունը դեպի լավն եր փոխվում :

Մայրը միշտ զայիս եր և նրանք յերկար դրուցում եյին :

Մի որ ել, ուրախ-ուրախ այլտեղ մտավ Աղաջանն ու ծիծաղելով, մոտեցավ Կոստյայի մահճակալիին :

Կոստյան նրան իսկույն ճանաչեց և իսկույն թեր դուրս ձղեց և նրանք համբուրմիեցին :

— Կոստյա ջան, այ տա, վո՞նց ես ե :

— Վնաս չկա, մեռել չենք : Դու դործարանից պատմի :

— Տնաշեն, դործարանին ի՞նչ կա վոր, դու լավացիր :

Այդ որոհին ներս մտան կը յուկում ու Տոսյան : Կրյուկովր հասնելուն պիս, սկսեց պաչ-պչիլ, իսկ Տոսյան հեռու կանգնած, ժապում եր :

— Իվան, հազիր ես սկսել, հենց Տոսյայի փոխարեն և պաչիր-ծիծաղելով տսաց Աղաջանը :

— Ինչու, Տոսյայի լրթունքներին հո մեռոն չի
քսված, թող ինքն ել պաշի ելլի:

— Ել պաշելու ի՞նչ թողեցիր, ինձ մնաց միայն
ձեռքը սեղմել, — ծիծաղելով ասաց Տոսյան և բռնեց
կոստյայի թելից:

— Դե լավ, — ասաց Կրյուկովը, — Կոստյա այժմ
դու պատմիր, սիրելիս, տեսնեմ ես ի՞նչպես պատահեց:

— Ե՞հ, ո՞վ ա իմանում. Դրիշան եր...

— Տես ե, չասացի՞՝ վոր արոյկի դործը կլինի:

— Ե՞հ, լավ, իմաստուն ես, — բոթելով, ասաց Ա-
ղաջանը: Դու հիմա ասա, Կոստյա, վո՞նց ես դպում քեզ:

— Մի վախեցի, չենք մեռնի:

Այնուհետև յերկար խոսեցին: Կոստյան դանդաղ ու
շունչ առնելով պատմեց, թե դիշերով ինչպես իրեն
խփեցին: Առաջարձյալ հարցրեց դործարանի և ընկեր-
ների մասին:

Հետո նրանք վոտքի կանգնեցին դնալու:

— Կգանք, ելի կը անք, Կոստյա ջան, բայց դու աչ-
խտիր շուտ լավանալ: Տես, մինչեւ մեր մյուս հան-
դըստյան որն, ել եստեղ չլինես:

— Շուտ լավացիր, — ծիծաղելով ու մտար թափ
տալով, ասաց Կրյուկովը:

Յերկուսով հեռացան: Տոսյան կանգնած տեղը մեկ
ել նայեց նրան ու ծիծաղելով ասաց.

— Հը, շուտ ե՞ս լավանալու:

Կոստյան ժպտաց:

— Շուտ լավացիր, վոր լավանաս, մենք մոտ, շատ
մոտ կլինենք:

— Ե՞հ, — դժոխությամբ ձեռքը թափահարեց Կո-
տյան:

Տոսյան խղճահարիւած մոտեցավ նրան: Կրույկովն
ու Աղաջանը դահլիճից դուրս ելին յեկել: Տոսյան դդու-
շությամբ բռնեց նրա ձեռքն ու սեղմեց իր ափի մեջ:

— Կոստյա, շուտ լավացիր. մենք մո՞տ, շատ
մո՞տ կլինենք — ասելով, ջերմ կերպով համբուրեց նրա
դեղնած ճակատը և շոտապ քայլերով դահլիճից դուրս
յեկավ:

— Մնացական, եղ ի՞նչ ես ասում, պինդ խոսա, մենք ել հասկանանք, — կանչեցին այս ու այն կողմանածները:

Մնացականը շրջանից յեկած «Հնդերին» թողեց ու շից գետի ժողովուրդը:

— Ասելու են ա, վոր մենք Սիմոնից թահրին մարդ չունենք: Ինքը ջահել, զբի սև ու սպիտակը ճանաչող, խելքը գլխին և իսկական ժողովրդի մարդ: Նրանից մինչև հիմքի ո՞վ ամի փիս խոսք լսել: Նա ո՞ւմ համբին ա անտեղի քիշ արել: Իմ կարճ խելքովս, այ ժողովուրդ նրանից լավը մենք ունենք վոչ: Վոչով կարալ չի նրանից լավ գեղ յոլա տանել:

— Մնացականը դուզ ա ասըմ, — բացականչեցին այդաեղ նստածներն այս ու այն կողմից:

— Վո՞նց ա դուզ ասըմ, — տեղից շարժվելով, բայց կամաց, կարծես թե միայն իր համար, ասաց կափունց Դավիթը, — մատը կաթ մի տղա յա, նա տեղի դարդը ի՞նչ ա իմանրմ:

— Ինչի՞ն յես բռենց ասըմ — իսկույն տեղից պատասխանեց մեկը, — ո՞վ կարա նրանից լավ գեղ կառավարել:

— Այդաեղ թողե՞ք խոսելը, ընկերներ, — ձեռքը ուղարկած խմբելով ասաց շրջանից յեկածը: Յեթե ցանկանում եք խոսել ձայն ինդրեցեք յես թույլ կտամ:

— Ել ի՞նչ խոսել ա պետք, Մնացականը շատ դուզ խոսեց:

— Գուցե ուրիշին եք առաջարկում, — ավելացրեց շրջանից յեկածը:

— ԶԵ, ՍԻՄՈՆԸ...

— Այդ գեղքում ովքեր համաձայն են, վոր ընկեր Սիմոնն ընտրվի գյուղի խսպոլկոմ, թող ձեռքը բարձրացնի:

Բոլոր նստածներն ել մատները բարձրացրին: Միայն իւսնց Մխոն եր, վոր աչքի տակով նայեց Կափոնց Դավթին և ինքն ել մատը ցածրացրեց:

Վերջում, յերբ բոլորն ել դուրս եյին դալիս, Խևնց Մխոն՝ քառասունհինդն անց, սև դեմքով ու յերկարահասակ մի մարդ՝ մոտեցավ Սիմոնին:

— Բարով կառավարես, Սիմոն ջան: Յես հենց են գլխից եյի ասըմ, վոր քեզ նման ոչով կարալ չի ես գեղը կառավարել: Հմի ել վոր քեզ ջոկեցին, եղ հո ամենից լավը դառավ: Մենք ել հո, լավ խսպալկոմի խոսքիցը դուրս յեկողը չենք: Ուրիշներն ինչ ուզում են, թող առեն, դու ականջ չդնես, մենք հետեւումդ կանդնած ենք:

— Շնորհակալ եմ,—անտարբեր պատասխանեց Սիմոնը և ուզեց դնալ:

Այդ առաջի դեպքն եր, վոր Մխոյի յերկը որդ անդամիա ամուսնությունից հետո, Սիմոնը հետը խոսում էր: Նա միշտ խուսափում եր Մխոյից, վորպեսզի հետը չխոսի: Այդ ինքն ել չդիտեր, թե ինչու յեր այդպես, բայց զգում եր, վոր այդ մարդուն տեսնելիս, իր սիրտը մի տեսակ կուչ-կուչ եր դալիս:

Մխոն տեսնելով Սիմոնի լուռեթյունը, ինքն անուշադրության մատնեց այդ հանդամանքը և շարունակեց խոսել.

— Սիմոն, շատ ես մաշվել, ետ ինչու չես անցնում մեր կողմերը: Անցիր, դեսից—դենից կիսուանք:

— Շնորհակալ եմ,—կը ին ոնտարբերությամբ ասաց Սիմոնն ու հեռացավ:



Սիմոնը դեռ տասնվեց տարեկան տղա յեր, յերը հայրը մեռավ, մոր և քրոջ հոգուը զցելով իր վրա: Հետո իրա հասան ազդամիջյան կոխիները, գյուղը գաղթեց ու

Սիմոնի դործերն ամելի դժվարացան։ Նա հարևան դյուլում բարակակություն եր անում, զբաղվում եր հին կարկատած շորերի առետըով, վորպեսդի մորն ու քրոջը մի երազ պահի։

Բոլչեիկների գայուց հետո, յերբ նրանք չոքս առարվա տանջանքներից հետո կրկին իրենց գյուղ վերադարձան, այդ ժամանակ մայրը քառասնութամյա չարչարանքից հետո դնաց հանգստանալու, իր կյանքը բաշխելով աղին ու աղջկան։

Անտանելի շրջան եր դա։ Վոչ ցանքս կար, վոչ ել ապրուստի մի այլ միջոց։

Սիմոնը մեջքով չոր փայտ եր կրում, ածուխ պատրաստում և այդ ածուխը կրկին շալակելով, քառասունքառասունհինդ վերստ ճանապարհ եր տանում և այնտեղ փոխում մի հինգ-տասը ֆունտ գարու կամ կորեկի հետ։

Հենց այդ ժամանակ եր, վոր նրա սրտում մի բան թնդաց։ Այդ Զարոյի հետ ամուսնանալու հույսն եր։

Նրանք Զարոյենց հետ հարեաններ եյին ու գեռ փոքրուց միշտ միասին եյին լինում։

Յերբ գեռ չեյին գաղթել ու յերբ գեռ շատ փոքր եյին, Սիմոնը Զարոյի հետ առավոտից մինչև յերեկո այդիների ծառերի տակ եր լինում, իսկ կեսորվա տաքին՝ ջրերում միասին լողանալիս։

Իրիկունները տուն վերադառնալիս, Սիմոնը շշնջում եր Զարոյի ականջին։

— Զարիկ, տես, են աստղն իմն ա, իսկ նրա կողքինն ել քոնը. լավ են չե՞...

— Մեր ասադերը բոլոր աստղերից ուրախ են...

Այդ բոլորը տեսնելով, գյուղացիք ասում եյին.

— Մեր են, մեծանան՝ կամուսնանան...

Սիմոնը գաղթական յեղած ժամանակ ել չեր մոռանում Զարիկին և հաճախ եր հանդիպում նրա հետ ձիշտ ե, նրանք միենույն գյուղում չեյին ապրում, բայց Սիմոնը սոխի սերմ ծախելու պատրվակով հաճախ եր դայիս այդ գյուղը, վորպեսդի Զարիկին տեսնի։

Գյուղ վերադառնալուց հետո, յերբ Սիմոնը մի որ վոտք դրեց իրենց տան շեմքին, քույրը տիսրությամբ դիմավորելով, առաց.

— Զարոյին տվին Խենոց Մխոյին...

Սիմոնը զարմացած նայեց քրոջը, սիրու մի զարկեց, դեմքի գույնը դեղնեց և նա թուլացած մտավ տուն:

Այդ դեպքը գյուղում ել եր խլրտում առաջացրել:

— Եղ վո՞նց ա, վոր Զարոն գնացել անրան:

— Իրա աղջիկը Զարոյի թայն ա:

— Զարոն մեղավոր չի, հերն ա զոռով տվել:

Իրոք, Մխոն արդեն ծեր մարդ եր: Առաջին կնոջ մահվանից հետո դեռ յերեք ամիս չանցած, նա իսկույն ամուսնացավ Զարոյի հետ: Զարոյի հայրը թեև սկզբից ընդդիմացել եր, բայց վերջում ինքն ել եր համոզվել:

— Ինչ անեմ, թանկ տարի յա: Զարոյի կերածը մյուսներին կմնա: Մխոն հարուստ ա, մեղ ձեռք կրոնի:

Խեվենց Մխոն գյուղի հարուստներից եր: Գաղթի ժամանակ նրանք մնացել եյին առաջին իսկ սահման կազմող հայկական գյուղում և սկսել թալանել այն բոլորն, ինչ վոր թողել եյին գյուղացիք: Հետո նրանք հափշտակել եյին սահմանամերճ թուրք գյուղի վոչխարի հոտը և բաժանել իրար մեջ: Այնպես վոր, յերբ նրանք ել մյուսների նման բայլչեիկների դալուց հետո վերադարձան գյուղ, յեկան ավարով ու կողոպուտներով և տվելի հարստացած:



Զարոյի ամուսնանալուց հետո Միմոնն ավելի թախունու եր դառել: Նա փակվում եր անարև խրճիթում ու լուռ մտածում:

Գյուղամեջ դուրս գալիս ել առանձնանում եր, նրա տում փողոցի ամենավերջին քարերից մեկի վրա և դլուխը կախում:

Յերկար ժամանակ եր անցել, բայց նա Զարոյին դեռ չեր տեսել:

Մի որ, յերբ զլուխը կախ տուն եր գնում, հանկարծ դեմք զլուրս յեկավ Զարոն, կուժն ուսին դրած, մի քանի կանանց հետ ջրի գնալիս:

Զարոյի դեմքն իսկույն շառագունեց և նա զլուխը

Դախիսց : Սիմոնն այդ բոպելին զգաց , վոր սըտի խփոցն արագանում է :

Զարոյի անցնելուց հետո , Սիմոնը մտամոլոր ման էր դալիս փողոցում : Անսպասելի կերպով մի չուն պատից ցատկելով , նրա վոտի վասփուկ մասը բերանն առավ :

Նրա աղմուկի վրա հավաքվեցին դյուղացիք , բայց արդեն ուշ երշան առամները խրվել եյին մինչեւ վերջ :

Այդ դեպքից հետո Սիմոնը յերկար ժամանակ պառկած մնաց : Նա դեղնել եր ու նիհարել և տնից որերով դուրս չեր դալիս : Քույրը սրանից-նրանից կորկոտ կամ հաց եր վոխ առնում և մի կերպ ապրում եյին :

Մի որ ել Զարոն ջրի ճամբին հանդիպել եր Սիմոնի քրոջն ու հարցընել .

— Սիմոնը վո՞նց ա :

— Բարաթ ա :

Նա ուղեցել եր դարձյալ բան ասել , բայց մտածել եր , մտածել ու թողել հեռացել :

Այդ բանը քույրը յեղբորից թաղբարեց , վորպեսզի նրա թախիծն ամելի չիրկնապատիի :

Արեր շիկացավ : Ծառերը թռչունների ուրախ ճըռա վոդյունի հետ միասին , զուղվեցին սպիտակ ծաղիկներով : Սիմոնը միայն այդ ժամանակ տնից դուրս յեկավ չափաղանց գեղնած ու նիհարած :

Դեռևս չեր կարողանում ծանր աշխատանք կատարել : Բայց մի յերեկո , նախիրի գալուց հետո , յերբ աստղերն արդեն վասմել եյին յերկնքում , նա բահն ուսն առավ , վորպեսզի դնա այդին ջրելու :

Գյուղի վերնի ծառերի տակովն անցնելիս , կամաց մեկը հետեւց կանչեց . նա իսկույն յետ նայեց . Զարոն եր . . .

— Գյուխտ կախ ո՞ւը եղակես :

Սիմոնի սրտի դարձերն ամելացան . նա նայեց գետնին ու չկարողացավ պատասխանել :

Զարոն ավելի մոտեցավ նրան, նայեց դեմքին ու
հարցը եց.

— Եղ ինչի՞ յես մաշվել ըտենց:

— Մաշվել եմ ելի:

Լոեցին:

— Ի՞նչ ես ասում վոր, — հետո հարցը Սիմոնը:

Զարոն չպատասխանեց: Սիմոնն ուսից վերցրեց

բահը, նրա ծայրով գետնի վրա խաչեր քաշելով ասեց:

— Ասում ես ըտենց արիր ելի...

— Յես ի՞նչ անեմ. յես ուզում եյի...

— Վոր ուզեյիր, կանեյիր:

— Չե, Սիմոն, մի ասիլ, չե:

— Բա հիմի ի՞նչ ես ասում:

— Յես, — հարցը Զարոն, իսկույն նրա գլուխը
քաշեց իրեն, սեղմեց կրծքին, մի քանի անդամ համբու-
րեց և արագ հեռացավ:

Սիմոնը վախեցած չորս կողմը նայեց: — յարար,
մարդ չտեսա՞վ...

Ապա չորս կողմը նայելով, շտապ հեռացավ:

2

Սիմոնն արդեն աշխատացել եր:

Նա թեև սկզբում չգիտեց աշխատելու ձեւը, բայց
հետզհետեւ սկսեց ամեն ինչի յել ընտելանալ:

Սիմոնը հաճախ անցնում եր շրջանային կոմիտե,
ցուցմունքներ եր ստանում և կրկին վերադառնում
դյուլ:

Գյուղում դեռ կուս ու կոմիտեիտ բջիջներ չկային:
Սիմոնն ամենից շուրջ այդ մասին եր մտածում:

Ցերք այդ մասին նա հայտնեց շրջանային կոմիտե-
յում, այսաւել խոսք տվեցին, վոր կզան և բջիջ կկազ-
մակերակեն:

Կուսրջիջ այդպես ել չկաղմվեց, վորովհետեւ դյու-
լում քիչ կուսակցականներ կային:

Մի քանի որից հետո դյուլ յեկավ շրջանային կո-

միտեյի հրահանդիքն ու հավաքելով դյուոլի բոլոր յերիտասարդությանն ընդհանուր ժողով հրավիրեց :

Այդաեղ ցուցակագրվեցին քանայոթ յերիտասարդ, վորոնք բոլորն ել ցանկանում եյին մտնել կոմյերիտմիության շարքերը :

— Յես այդ ցուցակին դեմ եմ, — խոսք խնդրելով, ասաց Սիմոնը :

— Ինչո՞ւ վոր :

— Եսրովհետեւ այդ ցուցակում կան այնպիսիները, վորոնց մենք թույլ չպիտի տանք կոմսոմոլի մեջ մտնելու :

— Վորո՞նք են դրանք, — հետաքրքրությամբ ցուցակին նայելով, ասաց հրահանդիչը :

— Որինակ, կափոնց Համոն : Նրանք հարուստ են. նրանք նոքար են պահում : Նա ինչպե՞ս կարող ակոմսոմոլ դառնալ :

— Ճիշտ ե, ճիշտ ե, — հաստատեցին այս ու այն կողմից ե հրահանդիչը նրա անունը ջնջեց ցուցակից :

Սիմոնին ընտրեցին բջիջի քարտուղար :

— Ընկերներ, յես ժամանակ չունեմ, յես յերկու ուաշտոնք վո՞նց կուտարեմ :

Բայց ուրիշ հարմարը չկա : Սիմոնն այլևս չնդիմացավ :

Ժողովից դուրս դալիս, կափոնց Համոն նրա մոտավոր անցնելիս, ասաց.

— Չոփուռ Սոզոն ել եր հետո ընկած (Սիմոնի հայրը), ի՞նչ արար, վոր դու յել ինչ անես : Իմ տեղու ել դու դառ, բայցի տեղու ինն մնա :

Սիմոնը նրան չպատասխանեց և հրահանդիչի հետ խոսելով, գնաց :

Սարերից յեկող քամին իրար ովեց ծառերի կանաչ տերեները : Այդ ժամանակ նրանց մոտենալով Ակենց Մխոյի բարակ Զաքարին ասաց.

— Ուղում եմ մի բան ասեմ :

— Հը :

— Հիմի իրավունք չկա հրացան պահելու չե՞ :

— Բա իհարկե :

- Բա Մխոն ինչի յա պահում։
 — Են քու մոտիդ բիրդանկե՞ն ես ասում, վոր
 հետդ վոչխարն ես տանում։
 — Զե։
 — Բա՞։
 — Հրեն գոմի ոճորքումն յերկու թաղա մոսին
 թաղցրած։
 — Լավ, տուն մտնենք, —ասաց Սիմոնն ու նրանք
 փոքրիկ խրճիթի դռնով ներս մտան։
 Քույրն արդեն քնել եր։ Տանը վոչ մի լույս չեր վառ-
 վում։ Միայն լուսնյակի կաթնանման լույսից մի բա-
 րակ փունջ կախվել եր հերթիկից ու թրջել պատը։
 Նրանք նստեցին պատի տակ բացած տնկողնաշո-
 բերի վրա և Սիմոնն ասաց։
 — Ասում ես վորտեղ ա թաղցրա՞ծ։
 — Գոմի ոճորքում։ Յերկու հատ ա. վերի պատի
 դլիսից, ոճորքի տախտակների արանքն ա խրած։
 — Դե լավ, դու զնա և եղ մասին ել ձայն մի հանիլ։
 Զաքարը կանոնեց. տանից դուրս դալիս նրա
 զլուխը կալավ դռանը, ձեռքը տարավ դլուխը բռնեց,
 ուժ արավ ու դուրս զնաց։
 Նրանք ծիծաղեցին։
 — Բա ասում ես մեր գյուղացիք խաղաղ ժողո-
 վուրու են, — Զաքարի գնալուց հետո ասաց հրահանդի-
 չը։
 — Ամեն նախիրում ել բուղա կլինի, — ծիծաղելով
 պատասխանեց Սիմոնն ու նրանք յերկուսով միտսին
 պատռած վերմակը քաշեցին գլխներին։

3

Սիմոնը հենց նոր գալով շրջանից, աղբյուրի դլիսին
 հավաքել եր գյուղացիներին ու բացարում եր պետու-
 թյան վորոշումն իրենց գյուղի մասին։

— Մենք հինգ տարի նալու չենք տալու։ Մեզ վրա
 համապատասխան չափով նալող են գցելու, բայց դա
 մեր գեղիցը դուրս չի գալու։ Ետ փողով մենք աղբյուրն

ու կամուրջն Անք չինելու։ Իսկ գյոլի մասին դիմումն եղ այլեցի և ինքս մի լավ մանրամասն բացատրեցի։ Եղույթ տեխնիկ ազայու գյոլին մտիլ տա։

Գյուղացիները հրճվում եյին։

— Արա, զե ել ևս կառավարությունից ել ի՞նչ եք ուզում։ Ել ըստնց կառավարություն կլինի՞։

— Ապրի մեր Սիմոնը։ Սիմոնը չլինի, կառավարությունն ի՞նչ ա խմանում, վոր մեր զեղըմը քանդված դյու կո և պետք ա շինել։

Իրոք Սիմոնը շատ եր մտահողված լճի վերակառուցման խնդրով։

Դա մի հոկայական արհեստական լիճ եր, վորը դադրի բնթացքում փչացել եր ու հողով լցվել։ Հարկավոր եր միջի հոդր գուրս տալ, պատերը նորոգել և ամբողջ ձմեռվա բնթացքում զետի ջուրը լցվելուց հետո, ամբանն այդ ջրով վոռողել հոկայական տարածություններ։

Այդ աշխատանքը գյուղացիները չեյին կարող առանց պետության ողնության դլուխ բերել։ Պետություններ խոսք եր տալիս ողնել։

Յերկու ձիավոր գուրս յեկավ բլուրը։ Սիմոնն ուրախացած սպասեց, մինչեւ նրանք մոտեցան և պատվիրեց մի յերիտասարդի, վոր ձիաների առաջը խոսդցի։ Այս նու մոտենալով Խենց Միոյին, ասաց։

— Միո ապեր, են թվանդները զնա բեր հանձնիր ևս ընկերներին։

— Ի՞նչ թվանդ, Սիմոն ջան, —իրը զարմացած, հարցըրեց Միոն։

— Են, վոր թաղցըել ես։

— Հանաք ես անըմ, թե ի՞նչ ա։ Դե չորանի մոտը մի թվանդ ունենք, եղ մասին ել կառավարությունից թուղթ ենք հանել ելի։

— Եղ չեմ ասում։

— Բա ել վո՞րը։

— Դե ել յես չզիտեմ։ Իմ պարտքս ա, վոր նախադպուշցնեմ։ Տեսք, այ ժողովւրդ, ձեղ ել եմ ասում

ով թագցրած թվանք, բան ունի, թող բերի, իսկ յեթե
հետո գտնվեց, ել ինձնից նեղանաք վոչ:

Հետո նա մոտենալով ձիավորներին, ասաց.

— Զի բնրում, մենք ինքներս կդտնենք:

Սիմոնն ընկալ առաջ, յերկու ձիավորները հետեւ-
ցին նրան: Յերբ նա մատնցուց արալ թագցրած հրա-
շանների տեղը, Մխոյի վոտները սկսեցին դողալ: Նա
մոտենալով Սիմոնին, կամաց ասաց.

— Սիմոն, համա լավ չարար...

4

Աղքյուրի վրա կռացած բաղամի ծառի ճղներն ո-
րորվեցին: Խոտերի արանքից լսվեց վոտքների զոփյուն
և մարդկային հեվոց:

Մեկը պատից զգուշությամբ ներքե ցատկելով,
կուչ յեկալ գետնին և սկսեց լուռ ունկնդրել:

— Զայն լսեցի, — վախսաց Զարոն:

Սկսեցին ականջ դնել, բայց ձայնը յերկրորդ ան-
դամ չկրկնվեց:

Նրանք մի քանի վայրկյան լուռ սպասելուց հետո,
տեսնելով, վոր ձայն չի լսվում, շարունակեցին.

— Իսկ դու ինձ չե՞ս խարի, Սիմոն:

— Ե՞ս ևս յերեխա-յերեխա խոսում: Յեթե յեւ
քեզ խարելու լինեմ, ել ինչու յեմ հետեխց ընկնում:

— Յես իմ: Բա զեղացիք ինչ կասեն:

— Ինչ ասում են, թող ասեն. սկզբից մի քիչ տակ
ու գլուխ կխոսեն, հետո իրենք ել կլուն:

— Ախր Մխոյից եմ վախենում և, Մխոյից: Նա
մեզ յերկուսիս ել...

— Վոչինչ չի կարող անել. Համաձայն չես հետն
ապրելու, պրծավ:

— Բա յերեխա՞ս:

— Յերեխա՞դ... յերեխադ ել... դե յես ինչ իմա-
նամ...

Կրկին հաղոց յավեց և նրանք իսկույն լուեցին:

— Սիմոն, մեզ կլսեն. գնանք, հետո եղ մասին կխո-
սենք:

Նա կրկին գրկեց Սիմոնին : Սիմոնն ազատվելով նրա
միաժուկ բաղաւէնքներից , շրթունքները մոտեցրեց :
Քանդված աներից գուրս գալիս նրանք մի անգամ
եւ գրիտխառնվեցին և անջատվեցին :

Մի քանի քայլ դեռ չանցած , Կափոնց Դավիթը հա-
յատարիեց Սիմոնին , ասաց .

— Դոչաղ տղի համար ամեն ինչ ել հալալ ա : Համ
իաթ ու մածունը չեն տա Խեննց Մխոյին , համ ել գեղե-
ցիկ կինք :

Սիմոնը չպատասխանեց և լուռ շարունակեց ճանա-
պարհը :

— Մի վախեցիր , խփի թող գնա . յեմիյանըն մալի
յեալլար *) , — ասաց Դավիթը և քթի տակ քմծիծաղ
տալով , ինքն ել հեռացավ :

5

Յերեկոյան յեղները կալից արձակելուց հետո ,
Մխոն ճակտի քրտինքը սրբելով , նստեց գեղի տակ
հանդստանալու : Այդ ժամանակ հեռվից վնթինթալով
մոռհցամի Կափոնց Դավիթը :

— Պահ , պահ , տաք ա , բալամ , շատ տաք :

— Յեկ , յեկ նստիր տեսնենք ել ի՞նչ թաղա խարար
ունես :

— Ի՞նչ խարար ես ուղում . մեր քանդված գեղում
խարար շատ :

— Երի հենց :

— Ե՞ւ , յես ի՞նչ դիտենամ ասում են Լիպարիտի
չինն ա մարդից գուրս յեկել :

— Վահ , — դարձացամ Մխոն , — ի՞նչ վոր :

— Այ տա , ո՞վ ա հասկանըմ . մինը քյասիր ա , կինը
չի սրահըմ , մինը կնկանը չի հավանում , գուրս ա անըմ ,
մինը կնկանն են խայտառակ անըմ և գուրս անըմ յեռ
իմանամ . հիմի ել ի՞նչ ասես , վոր չի կատարվըմ :
Դառավարությունը տեել են լածիրակների ձեռքը , նրանք
եւ ինչ քեֆները տալիս ա , անըմ են : Զեչոտ Սողոյի

*) Զուտաղի առջաւ թթ եռամեն :

տղեն ի՞նչ գեղ հառավարող ա, վոր նրան սպալկոմ հեն
հնդրըմ: Նրան խողաս լավ լոթություն-դյավազու-
թյուն անի, սրա նրան կնկա հետեւից ընկնի, մատնու-
թյուն անի, խարարներ տա...

— Բնչի յես ըտեսց ասում, նա լավ տղա յա, — իբր
Դավթին փորձելով, ասոց Մխոն:

— Բա վոնց չե, լավ աղա յա: Քու թվանքների մա-
սին խարար տվողը յե՞ս եյի. Հազրոյին բռնել տվողը
յե՞ս եյի, թե Նժղեհի ոգնականն ա յեղել: Նրանից եր
նախանձ, խային մարդ չկա ես դեղքը: Մեր Համոյին
թողել չի, վոր համամոլ դառնա, ինչ ա, քե դուք հա-
րուստ եք, նոքար եք պահըմ:

Ասըմա բոլորը մի կողմ են ելել, նա մի կողմ, թե
հարելի չի Համոյին կոմսոմոլ անել: Բա սա ել հարեւանի
շնորք ա՞ն, սա ել զեղ կառավարողի խոսքեր ա՞ն: Ով ասըմ
ա ասի, դու հլա պետք ա ասես վոչ:

— Բնչի՞:

— Յերեկ են վոր յես տեսա, դու տենեյիր...

— Ել ի՞նչ ես տեսել:

— Լավ, հարկավոր չի: Ծովի պես մեր լեն սրտը ը-
շատ րան ենք պահել, ետ ել կալանենք:

— Ախր ի՞նչ ես տեսել վոր:

— Դու վոր ըտենց ես խոսում, ել ի՞նչ ասեմ յես:

— Հեր որհնած, ասա տեսնեմ, բալքի յես ել եմ
համոզվում:

— Համզիելի զադ ա՞ն, վոր համզվես:

Նրանք մի պահ լրեցին: Դավթիթը վոտները ծալա-
պատիկ գրեց տակեր, ծխամորձը թեժացրեց ու սկսեց.

— Ա, խարքն ել զիտի, վոր քեզ աչքիս լսից շատ եմ
ուսում: Թե յես քու վատն եմ ուզում, թե յես քեզ ծուռ
աչքով եմ մտիե տալիս, թող ջուխտ աչքով քուանամ:

— Զուր տեղից ի՞նչ ես որդում ուսում. քեզ նո՞ր
եմ ճանաչում:

— Հա, են եյի ասում, երեկ իրիկունը վոչխարից
յետ դարձա, տուն եյի զալիս. լուսինն ըսենց մի հինգ
մարդարոյ զուրս եկած կլիներ: Մաթոսենց ես քանդված
տների մուռալն անցնելիս, տեսա մի քչիչոց ա լսվը:

Ասեցի մի տեսնամ ես ի՞նչ ձեն ա: Յեկաշ-յամաշ մոտեց—իմ տեղու հալա մութ ա, լուսինը չի ընկել— տեսան պատի տակի, իրար պինդ-պինդ խստած—տես ես բարի իրիկունը վոչ լիսացնեմ, թե սուտ եմ ասըմ—տեսա իրար պինդ-պինդ խստած Զոփուռ Սողոյի լածիրակ տղեն, մին ել...

— Հը՞—անհամբերությունը ասուց Միոն:

— Մին ել, դե յեզուս զալիս չի, ախր վա՞նց ասեմ, քանի վոր իմ գիտանարախ խեղճ աղջիկն անմեղ ա:

— Դե լավ, մինն ել ո՞վ եր:

— Մինն ել... դե Զարսն եր, ելի...

Միոն խկույն տեղից մի վեր ցատկեց—կարծես տակից ուրբ ասեղով ։ Նակեցին:

Դամիթիթն այդ նկատեց ու չարունակեց.

— Դե ի՞նչ ասեմ. յես լավ եմ իմանըմ, վոր խեղճ աղջիկը գառնին նման անմեղ ա, համա դե յերբ ժուլիկի մեկը մանըմ ա անմեղ մարդու զործի մեջ... Դու հա ասրմ ես նա լավ տղա յա: Արեգ եմ ասըմ, յերեկվանից դեսը ել յես հանգստություն չունեմ: Եղ բանը, վոր տեսա, քիչ մնաց են շան վորդուն շան սատակ անեմ, համա ինձ զսպեցի: Ես քշեր քնել չեմ: Այ տա, յա ես բանը տեսնալուց հետո ել մարդու քուն: Կտանի՞: Բա ես ել զեզ կապահարողի զործ ա՞: Քեզ հիմիկվանից ասըմ եմ, քանի են սադ լինի, ես գյուղում մի դուզ, բան չի կատարիի: Նա վողջ զեղը տակն ու վրա կանի: Մեր զեղը մենակ են ա քանդոմ, մեր երեխոց հայը կտրըմ:

Բայց նրա վերջին խոսքերն այլևս Միոն չեր լուսմ:

Միոն մուտքի կանդնեց: Նա որոքվելով և հուզված, մայսե սանդուխքով բարձրացավ կտուրը:

Զարսն որօրոցն իրեն ծռած, յերեխային ծիծ եր տալիս: Միոն առանց խոսելու, մոտեցավ իրար վրա գտրատած անկողնաշորերին և իր անկողինը բաց արավ:

Կինը զլուխը բարձրացրեց.

— Բա հաց չե՞ս ուտելու:

Նա կնոջ հարցին չպատասխանեց: Առանց շորերը հանելու, կեղտոտ վերմակը քաշեց գլխին:

Հորթարածը վստահ, վոր հորթերն իրենց պոչերը
դեռ շեն բարձրացնի, թողեց հորթերին արածելիս ու-
ինքն ել գնաց հովիվների մոտ:

Վեց-յոթ հոգի, նստած մի տափակ քարի վրա,
զրուցում եյին:

— Եերեկ կեսորին, յերբ վոր վոչխարը մոտեցը Զար-
րոյին, վոր կթի, — բերնի ջուրը կուլ տալով, պատմում
եր համոն, — նա վոչխարի ծծի պտուկը հոլորեց դեպի
ինձ և կաթը ծլալով տվավ յերեսովս: Ասում եմ եղ ի՞նչ
ևս անըմ, յես ել քու ծծիցդ ըտենց հուպ կտամ հա-
Ասըմա, կարալ չես: Ասացի, դե լավ:

Մի քանիսը դլուխները մոտեցը ին: Հորթարածը,
վոր ամենից փոքրն եր, հրեց գառնարածին:

— Իրիկունը, — շարունակեց Զամոն, — մութով եր,
յերը նրանց տուն դնացի, վոր հարցնեմ, թե եսոր վոչ-
խարն ո՞ւր տանենք: Բախտիցս Մխոն տանը չեր: Ասըմ
եմ.

— Բա Մխո ապերն ո՞ւր ա:

— Գագել ա ծառերը ջրի, — ասըմա Զարոն:

— Մենակ ես եյի:

— Ի՞նչ անենք վոր:

— Բա ինձանից վախըմ չե՞ս:

— Դու ինձ ի՞նչ պտի անես:

— Այ, են վոչխարի նման ծիծդ հուպ կտամ:

— Կարալ չես, — ասըմ ա նա:

— Կարալ չե՞մ, — ասացի ու բռնեցի...

— Վերջը, — անհամբերությամբ հարցը հոր-
թարածը:

— Վերջը են, վոր հենց զցա թաղթի վրեն ու...

— Վա՛խ, — զարմացած ասաց մեկն ու բերնի ջրե-
ը կուլ տվեց:

— Զենդ կարի, լոպտազ կատու, — հրելով ասաց մե-
կը, վոր մինչ այդ լուռ լսում եր: — Եղ ի՞նչ ես դլուխու-
զովում:

— Զես հավատում, մի հավատա:

— ի՞նչ, քեզ նո՞ր ևնք ճանաչում: Դու ի՞նչ մարդ
ես, վոր Զարոն քեզ մոտիկանա... Նա սկի քեզ վրա չե
յել խնչի:

— Ե՞ր, դու հասկանում ես, մի քիչ քեզ պահիր:
— Փիշտ, մասս չկծնս:

Նրանք բորբոքվեցին: Համոն տեղից վեր կացավ,
բայց մյուսները միջամտեցին և թույլ չտվին:

Նրանք բաժանվեցին:

Հորթարածն իջավ հորթերի մոտ և մահակը դեմ
տալով ծնոտին, սկսեց նայել հորթերին:

Այդ ժամանակ ձիու վրա նստած ներքենի ճանապար-
հավ անցնում եր Խենց Մխոն:

Այդ տեսնելով, հորթարածը ձայնը բարձրացրեց.

Վարդի թուփը բացվել ա, բացվել ա,

Հոսովը ձորը լցըել ա, լցըել ա.

Խենց Մխոն ի՞նչ անի— պառաված,

Զարոյին Սիմոնը պաչել ա, պաչել ա:

Հորթարածի յերգը Մխոյի սիրտը տակն ու վրա
արեց: Նրա դլուխը պտտվեց, աչքերը սկացան և քիչ
մնաց ձիուց ընկնի: Նա հաղիվ արտ հասավ, ձին արձա-
կեց ու ինքը պառկեց ծառի տակ: Իրիկնաղեմին, յերբ
Աղասին մոտենալով նրան հարցրեց, թե ինչու յե այն-
քան քնում, նա միայն ասաց.

Քեզ չունեմ...

7

Կափունց Դավթին թվում եր, թե մի գյուղ և ու մի
Սիմոն: Նա կարծում եր, վոր յեթե Սիմոնը չլինի, նա
վոչ նալոդ կտա և վոչ ել բարակները կզժգունեն:

— Ամեն ինչ նա յա տնրմ: Ամեն իրիկուն թխսկանի
նման հավաքում ա զլսին և լցնում գլուխները: Զորանն
ի՞նչ ա իմանրմ, թե բազրատ կոմը*) ինչ զիրիլ ա, յա
թա չորանի ինչն ա կորել, վոր նա մի կնիշկա ստանա-
լու համար ամեն որ զալմաղալ անի:

*) Բառբակեռմ:

Նա սմեն կերպ աշխատում եր, վորակեսդի Սիմոնին
այդ գործերից չեղոքացնի, բայց նրան չեր հաջողվում:

Իր գործերն առաջ տանելու համար, նա ոգնության
եր կանչում նաև ԽԱՅԵՆ Մխոյին, բայց վերջինս, վախե-
նալուց, հրաժարվում եր:

Մի որ ել, յերբ Մխոն դործից հենց նոր եր տուն
յեկել, Դավիթը կրկին անցավ նրա մոտ:

— Մտածեցի՞ր ասածիս վրա..

— Այ մարդ, ինձանից ձեռք վեկալ. հոգիս տան-
ջիլ մի: Ախր ի՞նչ ես ուզում ինձանից, հը, ի՞նչ ես ու-
զում: Թողնելու չես մեր որովք մեռնենք: Հը:

— Ել ի՞նչ ես բարութի նման վրթ-վրթը: Չառն
անես, ջհանդամը: Յես քեզ համար, դու ո՞ւմ համար:
Կարծը ես մենակ ինձ համար ե՞մ մտածը: Հքեն այ,
բսոր ել գնաց. կարծը ես քու չորանների մասին խո-
սալու չի՞: Ինձ ի՞նչ կա. սկի դարդ ել չեմ անըմ: Դու
հյա սպասիր, յեր նա քեզ ակլոր ծառ կըարձրացնի, են
վախտը յես քեզ հետ կիսում:

Դավիթը միանդամայն զարմացած նրա այդ որվա
պատասխաններից, թողեց ու հեռացավ: Նա ոքրա հա-
մար այլևս չեր դիմում Մխոյին: Բայց միաժամանակ
իր հիմնական նպատակը չեր ել մոռանում:

— Ես տեսակ ել բան կլինի՞, ըսենց ել զեղ կլինի՞,
ըսենց կառավարություն կլինի՞: Բա մի սազ զեղում յեր-
կու մարդի միայն նալոդ կդցե՞ն: Բա մենք յերեխաներ
յունե՞նք, — դոռդոռալով փողոցով անցնում եր կափունց
Դավիթը:

Կես որ եր ու սաստիկ շոդ:

Մխոն կալից արձակած յեզներն տուածն արած, ջրե-
րու յեր տանում: Նա տեսնելով Դավիթին այդպես բոր-
բռքված, հարցրեց.

— Ելի ի՞նչ ես ձենդ բարձրադրել:

— Հյա գնա, գնա, ԽԱՅԵՆ Մխո, ասածներս հետո
կիմանաս, համա են վախտն ել ուշ կլինի:

— Ախր ի՞նչ կա վոր:

— Ինչ ոկտաքառ ըլինի, զեղին ինչքան նալով ա յե-
կել, իմ ու քո վզիդ ա զրել: Դե ևս անգամ զնա երած
չելածդ ծախիր, նալովդ տուր, թող են սուրու յեթիմ—
յեսիր երեխերդ ել սովոր կտորինեն:

Մխոն բոբրաքմից:

— Ի՞նչ, ես աշխարհը թալան-թալանի յա՞: Ի՞նչ ես
ախմախ-ախմախ զիմիցդ դուրս տալիս,— նա առքա-
ցած ավելի մռաւցավ Դավթին, կարծես բոլորի ովատ-
հուր հենց ինքը Դավթիթը լիներ:

— Հվատըմ չե՞ս, ինու տես:

— Մի սպասիր տեսնեմ եղ ի՞նչ ես ասըմ:

Մխոն յեղները թողեց մողոցում կանգնած, իսկ
ինքն ուղղվեց զեպի Մխմոնի տունը:

Փոքրիկ խրճիթի գուռը ծածկած եր: Մխոն առանց
ծեծերու կամացուկ գուռը բաց արեց:

Ներս մտնելիս աչքերը նա մի քանի տնգամ բաց ու
խուփ տնելուց հետո, տան խալարում նշմարեց Զարո-
ւին, մոր ապշած իրեն եր նայում:

Մխոն սկզբից աչքերին չհավատաց: Նա ուշակրու-
թյամբ նրան նայելով, մոտեցավ:

— Ի՞նչ ես անում եստեղ, — բարկացած ասաց նա:

Զարոն չպատասխանեց: Մխոյի աչքերն աբյունով
ելին յցվել և թվում եր, թե արյունն այստեղից արցուն-
քի նմտն պետք է դուրս թափի՛:

Նա նույնիսկ մռաւցավ, թե ինչու համար եր յեկել
այդանու:

— Դուրս կորիր շուտ եստեղից:

— Ի՞նչ ես ուզում, — հաղիսկ կմկմալով ասաց ոինը:

— Ի՞նչ եմ ուզում, — ու նո ձեռքը բռունցք արած,
Հարձուկիեց կնոջ վրա, բայց Մխմոնի բաղուկները մի
պահ նրան—յետ կանգնեցրին:

— Հա՞ , հմի յել կի՞նո ես ուզում ձեռքիցս խլես:
Լայ ես անում, չսփուրի տղա, արա...

Մխմոնն այդ խոսքերից թուլացավ և յետ քաշվեց:
Մխոն հանգամանքից ողտմելով, Հարձակվեց կնոջ վրա,
մազերից քաշքելով դուրս տարավ:

Առաջին դեղքն եր, վոր նա կնոջը ծեծում եր:

— Զահել ա, կծեծեմ, կխրտնի, —ասում եր նա և
իրեն զսղում: Բայց այս անգամ նա արդեն իրեն կորց-
բել եր:

Տան դռնից մտնելիս նա մի անգամ ել կնոջն աքա-
ցիով խփեց և կինը դլորվելով ընկավ նրա վոտների
տակ:

— Բողի աղջիկ բող... հիմի յել որը ցերեկո՞վ ես
ուզածդդ անում: Ինձ Խենց Մխո կասեն, յես թողնալ
չեմ, վոր լակոտի մինը փափախս դետնովը տա... Լսում
ես, հու, յես քու խրատողի...

Նա կրկին հարձակվեց կնոջ վրա և սկսեց մազերից
քաշքանել:

Կինը նստած տեղում կուչ յեկավ և սկսեց ճշալ:
Զայնի վրա զարթնեց որորոցի յերեխեն և լաց յեղավ:

— Վերցրու յակոտիդ ել և կորիր աչքիցս: Ցես հմբ
յել ինչեր ա անում: Չեչոտ Սողոյի տղեն ջահել ա հա՞...
Նը՞, դե խոսա յե: Ցես պառավել եմ, հավան չե՞ս: Դու
լավ իմացիր, յես քեզ հազար ու մի կես կանեմ, միսդ
չների առաջը կցցեմ:

Նա հետդիետե ավելի յեր տաքանում և կրկնապատ-
կում հարվածների թիվը: Նա ջղայնությունից հելում
եր: Հետո նա փոքրիկ կուժի ջուրը դլիսին քաշեց և խմե-
յուց հետո գետնով ավեց:

— Ցես ել տուն չունեմ, յես ել ապրանք չունեմ,
յես ամեն ինչ եսպես չուն ու դելի բաժին կանեմ: Զամ-
դաքդ չներին կցցեմ և դլուխ կառնեմ, ես բարբադից
կհեռանամ:

Կինը հեկեկում եր արտասվաթոր աչքերով:

— Մի զոա, յես քու հերը... — գոռալով ասաց Մխոն
ու դուռը շրմիկացնելով, դուրս դնաց:

8

Տերեները դեղնեցին, ծառերը մերկացան և իրենց
բարակ ու մերկ ճյուղերը վեր ցցեցին:

Մերկացած ծառերին և կիսաքանդ տներին վերմա-
կի նման փաթաթում եր թանձր մառախուղը:

Գյուղացիք դաշտերից իրենց անասունները դյուզ հավաքեցին և կըկին հերթիկներից յելնող ծուխը միացավ ամողերի հետ:

Առ մի որ ել, յերբ Սիմոնն առավոտը շուտ տան դուռը բաց արագ, տեսավ ամբողջ գյուղը սպիտակ ձյունով ծածկված:

Նա այդ որը կըկին շրջան պետք է գնար, հիշեցնելու, վոր արդեն ժամանակն և լճի աշխատանքներն սկսելու:

Գարնանը և ամսոնը գյուղացիք ժամանակ չեն ունենամ:

Այժմ նրանք տանը պետք է նստեն: Հարկավոր և ցեմենտ և այլ շինանյութեր ստանալ, սկսել լճի նորողումը:

Քիչ հետո, յերբ փոյտը ձեռքին նա անցնում եր աղբյուրի գյուղ, այդ նկատեց Կափունց Դավիթն ու անցավ Ասենց Մխոյի տունը:



Բանկում Սիմոնն աշխատանքները վերջացնելուց հետո, գնաց կուսհրահանդչի մոա, վորակեազի բջիջի աշխատանքների հոմար համապատասխան ցուցմունքներ ստանա: Իսկ հետո յերբ ուղում եր ճանապարհ ընկել, հրահանդիչն տաց.

— Սիմոն, ուշ ե, մի գնա: Մնա այստեղ, առավոտյան կղնաս: Ճանապարհին գլխիդ մի փորձանք կդա...

— Քեֆդ քոք պահիր, բան չի լինի: Քույրս տանն անհանդիսու կրինի: Դե ցաեսություն: — Նա հրահանդչի ձեռքը սեղմելով, ճանապարհվեց:

Մառախուղը ձորում դարձյալ ստուտ-պտուտ եր անում: Ջյունի փաթիլներ նստում եյին նրա դեմքին և շնչառությունից հարվելով, յերեսը թրջում:

Նա ճանապարհին մտածում եր, թե լճի աշխատանքներն ինչպես պետք է վերջանան: Հետո հանկարծ միտն ընկափ Զարոն:

— Նրանց գատը շատ ձգձգվեց, ինչու:

Նա մտագրազվածությունից չեր նկատել, թե ինչպես որն արդեն մթնում եր:

Սիմոնը քայլերն արագացնելով, սկսեց յերդել:

— «Սերդ զրկած, զենքի փոխար վորսորդ եմ,
սար ու ձոր լնկած, քեզ վորսալու կարոտ
եմ...»:

Այդ ժամանակ նա հետեից լսեց մի բարակ սուլոց
և կանդ առավ: Նա նայեց չորս կողմը, վոչինչ չնկատե-
լով, կրկին սկսեց քայլել:

Սիմոնի ականջի մոտով մի դնդակ ծվաց ու անցավ:
Նա առանց յետ նայելու, քայլերն ավելի արագացրեց:
Չանցած մի քանի քայլ, մի ուրիշ գնդակ նրան ճանա-
պարհին ցած գլորեց: Կրծքից արյունն սկսեց շատրվա-
նել:

Գլորվնիս վոտի մեկը դեմ առավ մի քարի և նա
դժիսի վայր կախվերով, սկսեց խոխոցնել... Արյունը
լցվելով ականջներն ու բերանը, աղբյուրի նման սկսեց
ծլլալ:

Քիչ հետո քարերի միջից դուրս յեկան յերկու հո-
դի և մոտեցան արյունաքամ Սիմոնին: Առանց շշուկի,
յետեից գնդակ արձակողը ձեռին բանած դանակը խրեց
սրա կոկորդի մեջ և վիրախորի վերջին խոխոցը
լուրջեց...

— Քոշիր, օաչիր Համո, տանենք...

— Միու ամի...

— Քաշիր, շուտ արտ...

Նրանք դիակը ներքեւ դլորեցին:

Հեռվից լովում եր դայլի վոռնոցը: Մառախուղը
պատել եր սար ու ձոր:

Նրանք դիակը թողնելով մի քարի տակ—ձյունո-
խառն ալազում, ձորն է վեր, զաղտաղողի դեպի դյուղ
դնացին:

9

Դեռ դյուղ չհասած, Մխոն կանգնեց և առաց.

— Համո, մարդ բան կաեսնի, դու դյուղի մյուս
կողմով գնա, յես ել եստեղից:

— Լավ,—ասաց Համոն և բաժանմեցին:

Մի քանի քայլ անցնելոց հետո, Մխոն կանչեց.

— Համո:

Համմոն յետ նայեց :

— Վոր տուն կհասնես, Դավիթ առողջ ասի գա մի
քիչ խոսհնք :

— Լավ, — ասաց Համմոն և կրկին սկսեց քայլել :

Մոթե և խավար դիշեր եր: Թափովող ձյունը իսկույն
հարվում եր ու ջուր դառնում :

Մխոն ջրով լիքը տրեխները չփչփացնելով մտավ
առնել:

Մեծ աղջիկն ու աղին քնել ելին: Միայն Զարոն եր
տրթուն, վորն որորոցի մոտ նստած յերեխային ծիծ եր
տալիս :

Մխոն լուս նստեց գետնին և սկսեց տրեխները հա-
նել:

— Չոր դուլպա կա՞ , — հարցըրեց նա :

Կինը լուս, թողեց ծիծ տալն ու դնաց դուլպա բե-
րելու:

— Մի քիչ չայի համար ջուր տաքացրու, — կնոջ
գալուց հետո ասաց նա :

— Քիշմիշ չկա՞ :

— Հենց ընենց, չոր հացով կիսմենք :

Այդ ժամանակ զոնից լսվեց բարձր հաղի ձայն :

— Բարի իրիկուն, Մխոն, — դուռը բանալով, ասաց
Դավիթիթն ու մոտ յեկավ: — Հը՛, Մխոն, ջուրը հո շատ
չե՞ր վարարել:

— Տո վոնց չե, յեթե քիչ ել ուշ հասնելինք, սելա-
վող առուները կքանդեր:

— Հա, ասրմ ես բաենց ելի, — ասաց Դավիթն ու
նստեց քուրսու վերեկի կողմից :

Նրանք լոեցին: Հետո Մխոն ճեռներն իրար խփե-
լով, ասաց:

— Պահ, պահ, շատ ցուրտ եր: Մատներս փետա-
ցավ: Բայց ապրի Համմոն, շատ զոչաղն ա:

— Իգիթի աղեն ել իգիթ կլինի:

— Հա, մանղը բան չգիտի: Դուզ ա, ավալուց մի
քիչ զողղողում եր, համա վերջում չորերը մեջքովը
տվեց և սկսեց . . .

Զարոն կարծում եր, վոր գետը կրկին հորդացել և
և նրանք ջրի առաջն առնելու եյին գնացել: Նա թողեց
նրանց խոսելիս և գնաց յեռացրած ջուր բերելու: Հետո
նա ջրի մեջ սեւացրած հացի փշրանք զցեց, վորակեսզի
դույնը դուրս տա և լցնելով անոթների մեջ, դրեց Դավիթի
ու ու ամուսնու տռաջ:

Նրանք կորելի ճաթից կծելով, շարունակեցին խո-
սել:

- Ուրեմն ես տարի ել սելալից վախ չունենք:
- Չե, ել ջուրը կարաւ չի բարձրանալ: Տարին ել
չատ ձյունալի յա, բերքը լավ կլինի:
- Յերկաբ խոսելուց հետո, Դավիթը վոտքի կանգնեց.
- Բարի գրշեր, Միո...
- Լուսը բարին, Դավիթ ապեր...



Ահմանի քույրը լաց լինելով, մեկ սրա, մեկ նրա մոտ
եր դնում:

Յերեք որ եր, վոր յեղբայրը գնացել ու չեր վիրա-
դարձել:

Այդ լուրը լսել եր նաև Զարոն և ինքն ել եր ընկել
մտատանջության մեջ:

— Միո ամի, Միո ամի,— այդ ժամանակ կանչե-
լով բակը մտավ Համոն:

— Տունը չի, — ասաց Զարոն ու կրկին գլուխը կա-
խեց:

— Բա ո՞ւր ա գնացել:

— Ջղիտեմ:

— Ավտոս, բան պետք ա տռելի, — ասելով մոտեցավ
Համոն և նրա առաջից վերցրեց մի գույդ կարմիր գուլ-
պա:

— Ես ո՞ւմն ա:

— Տիրողը:

— Ե՞ւ, լավ կինը տիրողը, լավ դուլպաները՝ տի-
րողը...

Զարոն չպատռախանեց: Նա գլուխը կախ շարունա-
կեց աշխատել:

Համոն նայում եր նրան ու մտածում:
— Բան ե՞ս ասելու, —քիչ մնալուց հետո հարցը եց
Զարոն:
— Ինչ ա, չի կարելի՞ քեզ մոտ կանգնել:
Զարոն դարձյալ լոեց: Համոյի թեթևառվիկ բնա-
լորությոն ծանօթ եր նա և չեր ուզում հետը խոսել,
այց չդիտեր թե ինչպես հեռացնի:
Ուրիշ տեղ պետք ե դնամ, —անհամբերությամբ ա-
աց Զարոն:
— Դե լով, դնում եմ. —ասաց Համոն և ավելի մո-
ռեցավ Զարոյին:
— Ի՞նչ ես ուզում:
— Զարո...
— Շուտ դուրս մեկ, թե չե կկանչեմ...
— Ինչ ա, մի Սիմոնի չափ ել չկա՞նք:
— Նրա յեղունդի չանք ել չկաս, —անհամբերու-
թյամբ ասաց Զարոն և ուզեց դուրս դալ:
— Եղանակ, նրա յեղունդի չափ ել չկա՞մ: —Համոն
րան ուժով դրկեց: Նրա յեղունդը հիմա փտել ա և
ուն ու գելի փայ ա դառել: Այ, ըսենց ել Մխոյի դյուլ-
են ա խոտել Սիմոնին...
Զարոն ճշաց ու նրան հրելով, դուրս վազեց:
Որորոցի յերեխան դարթնեց և սկսեց լաց լինել: Հա-
մոն ապշաց կանդնել եր առն կենորոնում և դետնին եր
այսում:
— Սպանել են Սիմոնին, սպանել են Սիմոնին,
հողոցով դոսալով ասում եր Զարոն ու ներքե վա-
սում...

ԳԱԱ ՀԻմնարար Գիտ. Գրադ.



220038171



(294)

A 38191